ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏՈՆԱՑՈՒՅՑ



Սուրբ Ծնունդ
Մկրտութիւն
Սուրբ Սարգիս
Հաւատքով ուսումնասիրութիւն
Պարզ անուանք
Մուտք ի Վիրտոյն
Ծաղկազարդ
Ուսումնական
Խավարում
Զտրիկ
Ամառում
Յեւսումն Ս. Խաչի
Համբարձում
Աղ եկ տյուս
Սուրբ Հոխոնիանց
Ելն ի Վիրտոյն
Տուն Ս. Էջմիածնի
Պարզ տիպ
Աստուածածին
Դաշտերգ
Սուրբ Գևորգ
Վարդան Ս. Խաչ
Սուրբ Թադեոսի
Յիսուս Խաչի
Թադէոսի եւ Բարդուղիմէոսի
Սուրբ Ասեփանոսի





ՀՐԱՄԱՆԱՎ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԷՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գիրքս տպագրվել է
մեկենասությամբ

(Նյու Յորք) ԱՄՆ

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Պ 296

Պատկերազարդ տոնացույց.
Պ 296 - էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ էջմիածին,
2006, 100 էջ:

ԳՄԴ 86.37

Գիրքը ձևավորված է «Հողակաթ»
հեռուստաընկերության
«Մանուկների Աստվածաշունչ»
հաղորդաշարի պատկերազարդումներով:

Կազմողներ՝
Մանյա Ղազարյան, Անահիտ Համբարձումյան

Խմբագիրներ՝
Տ. Ղևոնդ քհն. Մայիլյան,
Տ. Ադամ քհն. Մակարյան,
Ս. Ստամբոլցյան

Նկարիչներ՝
Մերի Ասատրյան,
Միքայել Մկրտչյան, Ռազմիկ Ամիրխանյան

Տոների ժամանակացույցը՝
Գրիգոր Բրուտյանի

ISBN 99930-75-37-X
© Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2006 թ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏՈՆԱՑՈՒՅՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
2006

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 1783

9 նոյեմբերի, 2005 թ.

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Սիրով ողջունում ենք «Պատկերազարդ տոնացույց» խորագրով այս գրքույկի հրատարակությունը, որը «Շողակաթ» հեռուստաընկերության նախաձեռնությամբ կոչված է մեր մատաղ սերնդին հաղորդ դարձնելու եկեղեցական տոներին, արարողություններին ու դրանց խորհրդին և մանուկների սրտերում ու հոգիներում զորացնելու լույս հավատքը, սերը դեպի Սուրբ Եկեղեցին և սրբազան մեր արժեքները:

Ուրախ ենք մեծապես, որ նման աստվածահաճո ձեռնարկումներ են իրականացվում՝ հոգևոր-ազգային մեր դարավոր ժառանգության ավանդներով և քրիստոնեական ոգով կրթելու ու դաստիարակելու նոր սերնդին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում բոլոր նրանց, ովքեր ի սեր մեր մանուկների իրենց ջանքերն ու մասնակցությունն են բերել գրքույկի հրատարակությանը:

Մեր աղոթքն է, որ Երկնային Տերը Իր հանապազ խնամքի և օրհնության ներքո պահի-պահպանի մեր մանուկներին ու աշխարհի բոլոր երեխաներին և Իր բարիքով ու ուրախությամբ լցնի նրանց կյանքի բոլոր օրերը:

Սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սիրելի ընթերցող

Վստահ եմ՝ տարվա ընթացքում կան այնպիսի տոներ, որոնց դու մեծ անհամբերությամբ ես սպասում: Չափազանց հաճելի է, երբ հավաքվում է ամբողջ ընտանիքը, շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ են հնչում, վերհիշում եք տոնակատարության առիթ հանդիսացող իրադարձությունները:

Եկեղեցական տոներին մենք հավաքվում ենք եկեղեցում, մասնակցում սուրբ Պատարագի, Հաղորդություն ստանում: Եկեղեցին ևս մի ընտանիք է, իսկ մենք՝ սուրբ ավազանում մկրտվածներս՝ այդ մեծ ընտանիքի անդամները:

Մեր Եկեղեցում բազմաթիվ տոներ են նշվում, որոնք ավետարանական պատմության, հիշարժան որևէ իրադարձության կամ սրբերի, նահատակների հիշատակի ոգեկոչմանն են նվիրված: Քանի որ եկեղեցական տոները բազմաթիվ են և մեծ մասը՝ շարժական, դրանց մասին տեղեկանալու համար հարկավոր է օգտվել եկեղեցական օրացույցից: Իսկ այս «Պատկերազարդ տոնացույցը» ներկայացնում է մեր Եկեղեցու տոների մի մասը միայն, նրանք, որոնք մեր ազգային-եկեղեցական կյանքում կարևոր նշանակություն ունեն:

Եկեղեցական տոնացույցը տարվա օրերը երեք խմբի է բաժանում՝ տերունական տոների, սրբերի հիշատակի և պահքի օրերի: Տերունական տոները Հիսուս Քրիստոսին, Մարիամ Աստվածածնին, Խաչին և Եկեղեցուն նվիրված տոներն են:

Այս գրքի օգնությամբ դու կտեղեկանաս, թե եկեղեցական այս կամ այն տոնը երբ է նշվում, այդ օրը Եկեղեցու անդամներն ինչպես են միմյանց շնորհավորում, կկարդաս ոչ միայն տոնի, այլև դրան առնչվող ժողովրդական ավանդույթների մասին, գրքում զետեղված աղյուսակով կիմանաս շարժական տոների օրերը:

Այս գրքում դու կտեսնես պատկերներ, որոնց նախատիպերը ստեղծվել են մեզանից հարյուրավոր տարիներ առաջ, հայոց վանքերում, գրչության կենտրոններում ծաղկող (այսինքն՝ նկարազարդող) մանրանկարիչների ձեռքով: Դրանք հիմք են ծառայել «Շողակաթ» հեռուստաընկերության «Մանուկների Աստվածաշունչ» հաղորդաշարի ձևավորումների համար: Այդ հաղորդաշարի ստեղծագործական խմբի կողմից էլ քեզ առաջարկվում է այս «Պատկերազարդ տոնացույցը»:

Ավետում

(Մատթեոս 1. 18-25, Ղուկաս 1. 26-38)

Սուրբ Աստվածածնի ծնողներն իրենց ուխտի համաձայն Մարիամին ընծայում են տաճարին: Նա մեծանում էր Աստծո տանը՝ Երուսաղեմի տաճարում, և սրբությամբ կատարում էր Տիրոջ բոլոր պատվիրանները:

Այդ նույն երկրում ապրում էր Հովսեփ անունով ազնիվ և բարի մի մարդ: Նա համեստ հյուսն էր և իր ու հարազատների ապրուստը հոգալու համար աշխատում էր օրնիբուն:

Երբ Մարիամը չափահաս դարձավ, Երուսաղեմի տաճարի քահանայապետը նրան հանձնեց բարեպաշտ Հովսեփի խնամքին:

Այդ ժամանակ Աստծո ուղարկած հրեշտակը հայտնվեց Մարիամին և ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է: Ահա՛ դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի ու Բարձրյալի որդի կկոչվի, և նրա թագավորությունը վախճան չի ունենա»:

Մարիամն ասաց. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ»: Նույն հրեշտակը հայտնվեց նաև Հովսեփին, երբ քնած էր, և ասաց. «Հովսե՛փ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր Մարիամին քեզ մոտ առնելու, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին մեղքերից»:

Հովսեփն արեց այնպես, ինչպես պատվիրել էր Աստծո հրեշտակը:

Այդպես Մարիամն արժանացավ Աստվածածին և Տիրամայր կոչվելու մեծ պատվին:

Ավետման օրը մեր երկրում տոնվում նաև է որպես Մայրության և գեղեցկության օր:

Ապրիլի 7-ին՝ Պատարագից հետո, քահանան օրհնում է մայրության բերկրանքին սպասող կանանց: Բոլորի համար մայրն ամենաթանկն է և ամենանվիրականը: Այդ պատճառով ենք ասում՝ Մայր Եկեղեցի, Մայր Հայրենիք, մայրենի լեզու:





Սուրբ Ծնունդ

(Մատթ. 1.18-25, Ղուկ. 1.26-38)

Աշխարհի բոլոր քրիստոնյաների ամենասիրելի տոնը Հիսուս Քրիստոսի Սբ Ծնընդյան տոնն է:

Մեր Եկեղեցին Սբ Ծնունդը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է սբ Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդն Քրիստոսի»:

Հիսուսի ծննդյան պատմությունը ներկայացնում են ավետարանիչները:

Գաբրիել հրեշտակապետը հայտնվում է Մարիամին և ավետում Քրիստոսի ծնունդը:

Այդ օրերին հռոմեական Օգոստոս կայսրը մարդահամար անցկացնելու հրաման է արձակում, և Հովսեփը, մարդահամարում արձանագրվելու համար, իր խնամքին հանձնված Մարիամի հետ ճանապարհ է ընկնում դեպի հայրենի քաղաք, որ Հրեաստանում էր և կոչվում էր Բեթղեհեմ: Երբ տեղ են հասնում, բախում են իջևանատան դուռը, բայց այնտեղ նրանց համար տեղ չի գտնվում: Ստիպված Հովսեփն ու Մարիամը իջևանում են անասունների ախոռում: Եվ քանի որ երեխայի ծնվելու ժամանակը եկել էր, հենց այդտեղ էլ ծնվում է Հիսուսը: Մարիամն իր փոքրիկ նորածնին գրկում, համբուրում է, խանձարուրով պատում և դնում մսուրի մեջ:

Այդ ժամանակ Աստծո հրեշտակը հայտնվում է հովիվներին, ովքեր գիշերով բաց դաշտում հսկում էին անասունների հոտը: Հրեշտակը նրանց ասում է. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որն ամբողջ ժողովրդինը կլինի. որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի. խանձարուրով փաթաթված և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք»:

Զարմացած հովիվների աչքի առջև մի հրաշք էլ է տեղի ունենում: Երկնքից իջած հրեշտակի հետ երևում է նաև երկնային զորքերի մեծ բազմություն, որի ծայրը չէր

երևում, քանի որ ձգվում էր մինչև երկինք: Նրանք օրհնում էին Աստծուն և երգում. «Փա՜ռք Աստծուն բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՜ւն և հաճությո՜ւն՝ մարդկանց մեջ»: Երբ հրեշտակներն անհետանում են, հովիվները գնում ու գտնում են այն մսուրը, որտեղ մանուկ Հիսուսն էր: Նրանք խոնարհվում ու երկրպագում են մարդեղացյալ Աստծուն:

Այդ ժամանակ արևելքից մոգեր են գալիս Հրեաստանի Հերովդես թագավորի մոտ և ասում. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու»: Հերովդեսը չարությամբ է լցվում, քահանայապետերից և օրենսգետներից իմանում ծննդյան վայրը, որ Բեթղեհեմն էր, և մոգերին Բեթղեհեմ ուղարկելով՝ խորամանկությամբ ասում նրանց. «Գնացեք ստույգ իմացե՛ք մանկան մասին և երբ գտնեք, տեղեկացրե՛ք ինձ, որպեսզի ես էլ գնամ երկրպագեմ նրան»:

Մոգերին երևացած նույն աստղն առաջնորդում էր նրանց և ցույց տալիս ճանապարհը: Երբ աստղը կանգնում է այն տեղի վրա, ուր մանուկն էր, մոգերը հասկանում են, որ տեղ են հասել: Ներս են մտնում և տեսնում Մարիամին և մանուկ Հիսուսին: Նրանք խոնարհվում, երկրպագում են և, բացելով իրենց գանձատուփերը, որպես նվեր մատուցում ոսկի, կնդրուկ և զմուռս:

Այս պատճառով ենք Ամանորի տոնածառը զարդարում շողշողուն աստղով, քանի որ աստղն առաջնորդեց մոգերին Բեթղեհեմ և իր ճառագայթներով ցույց տվեց Հիսուս մանկան գտնվելու վայրը:

Քրիստոսը ծնվեց հասարակ մսուրում և ոչ թե թագավորական պալատում, որովհետև Աստծո համար ամենամեծ գանձը բարությունն է, խոնարհությունը, սերը և հավատարմությունը և ոչ թե թագավորական հարստությունը:

Մեր Եկեղեցին Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոնը կատարում է նույն օրը՝

հունվարի 6-ին: Եվ քանի որ Քրիստոսը ծնվեց կեսգիշերին, հունվարի 5-ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, և մատուցվում է Ճրագալույցի Պատարագ: Քանի որ ծնվելուց ուղիղ երեսուն տարի անց՝ նույն օրը, Հիսուսը մկրտվեց Հորդանան գետում, հունվարի 6-ին՝ Սբ Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է նաև Ջրօրհնեքի արարողություն: Ջուրն օրհնվում է սուրբ Խաչով, սուրբ Ավետարանով և սրբագործվում ջրի մեջ հեղվող սրբալույս Մյուռոնով: Եթե այդ օրը գնաք եկեղեցի, դուք ևս կստանաք այնտեղ օրհնված ջրից:



Մկրտություն և Աստվածահայտնություն

(Մարկ. 1.1-8, Ղուկ. 3. 1-18, 21-22, Հովհ. 1.19-28)

Մենք բոլորս մկրտվում ենք Քրիստոսի Եկեղեցում և ստանում քահանայի ձեռքով օրհնված խաչ: Այն խորհրդանշում է Գողգոթայի խաչը, որի վրա Քրիստոսը խաչվեց: Բայց մինչև սուրբ Մյուռոնով կնքելը, քահանան մկրտում է փոքրերին ջրի մեջ ընկղմումով, իսկ մեծահասակներին՝ լվացմամբ: Հովհաննես Մկրտիչն էլ Հիսուսին մկրտեց ջրով Հորդանան գետում:

Հովհաննեսի ծնողները՝ Զաքարիա քահանայապետը և Եղիսաբեթը, արդար և բարի ամուսիններ էին: Նրանք արդեն ծեր էին, բայց երեխա չունեին:

Մի անգամ տաճարում սպասավորելու ժամանակ Տիրոջ հրեշտակը հայտնվեց և ասաց Զաքարիային. «Քո աղոթքը լսեց Աստված, քո կինը մի որդի կունենա, որի անունը Հովհաննես կդնես: Եվ նա Տիրոջ առաջ մեծ կլինի»:

Ինչպես որ Աստված խոստացել էր, այդպես էլ եղավ. բարեպաշտ ամուսինները զավակ ունեցան և անունը Հովհաննես դրեցին: Երբ Հովհաննեսը մեծացավ, եկավ քարոզելու Հրեաստանի անապատում: Նա բոլորին ապաշխարության կոչ էր անում, հորդորում էր բարի լինել և մեղք չգործել: «Ապաշխարեցե՛ք,- ասում էր նա,- որովհետև երկնքի արքայությունը մոտ է»:

Եվ Հորդանան գետում Հովհաննես Մկրտիչն սկսեց մկրտել ժողովրդին:

Բոլորն իրենց մտքում Հովհաննեսի մասին հարցնում էին՝ մի՞թե նա է Քրիստոսը՝ Տիրոջ Օծյալը: Իսկ Հովհաննեսը պատասխանում էր. «Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները. նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և կրակով»:

Այդ ժամանակ Հիսուսը, որ արդեն 30 տարեկան էր, Գալիլեայից եկավ Հորդանան՝ Հովհաննեսի մոտ, որպեսզի մկրտվի նրա ձեռքով: Նրանք հանդիպեցին Հորդանան գետի մոտ, և Հովհաննեսն անմիջապես ճանաչեց Տիրոջը: Նա ընդառաջ եկավ և ասաց. «Ի՛նձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, և դու ի՞նձ մոտ ես գալիս»:

Իսկ Հիսուսը պատասխանեց. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես է վայել, որ մենք կատարենք Աստծո ամեն արդարություն»:

Եվ Հովհաննեսը Հիսուսին մկրտեց Հորդանան գետի ջրերում: Երբ Հիսուսը դուրս եկավ ջրից, երկինքը բացվեց, և Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով իջավ Հիսուսի վրա: Այդ պահին լսվեց Հայր Աստծո ձայնը, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, ով ունի իմ ամբողջ բարեհաճությունը»:

Սուրբ Ծննդյան հետ միասին մենք տոնում ենք նաև Աստվածահայտնությունը՝ Աստծո հայտնությունը, որը տեղի ունեցավ Հիսուսի մկրտության ժամանակ, երբ Հայր Աստված վկայեց Որդի Աստծո մասին և Սուրբ Հոգի Աստված աղավնակերպ իջավ:

Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պատճառով Հայոց Եկեղեցին Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը:



Տյառնընդառաջ

(Ղուկաս 2.25-35)

Երուսաղեմում ապրում էր Սիմեոն անունով մի մարդ, ով արդար և աստվածապաշտ էր: Ավանդությունը Սիմեոն ծերունու մասին պատմում է, որ նա Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի հրամանով Հին Կտակարանի գրքերը եբրայերենից հունարեն թարգմանողներից մեկն էր: Մի անգամ, թարգմանության ժամանակ, Սիմեոնը կարդում է Եսայու մարգարեության այն հատվածը, ուր խոսվում է կույսի հղանալու և որդի ունենալու մասին: Սիմեոնը մտածում է, որ մարդիկ կարող են չհավատալ, և ջնջում է այդ տողերը: Շուտով քուն է իջնում Սիմեոնի աչքերին, և երբ արթնանում է, տեսնում է՝ ոսկյա տառերով նորից գրված է. «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի»: Ծերունին ուրախությամբ վերցնում է Սբ Գիրքը, համբուրում և երանի տալիս նրանց, ովքեր պիտի տեսնեն կույսից ծնված հրաշք Մանկանը և գրկեն նրան: Տերը լսում է աստվածասեր մարդու խնդրանքը և խոստանում. «Մահ չես տեսնի, մինչև որ տեսնես Տիրոջ Օծյալին»:

Եվ ահա, երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, Սիմեոնը ընդառաջ է գալիս մանուկ Տիրոջը, գրկում է նրան և ասում. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար»:

Քառասնօրյա Հիսուսի՝ Երուսաղեմի տաճար բերվելու տոնը կոչվում է Տյառնընդառաջ, այսինքն՝ գնանք Տիրոջն ընդառաջ: Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14-ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից, քառասուն օր հետո: Իսկ փետրվարի 13-ին՝ երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցու բակում մեծ խարույկ են վառում, և տոնական հանդիսություն է սկսվում, որին մասնակցում են հատկապես նորապսակները: Այդ օրը եկեղեցում արտասովոր լուսավորություն է տիրում: Հավաքվածները ձեռքերում մեկական վառվող մոմ են պահում, որը տանում են տուն և լուսավորում իրենց բնակարանները:



Սուրբ Սարգիս

Սուրբ Սարգիսը քաջ և հմուտ զորավար էր Բյուզանդական կայսրությունում և հաղթությամբ էր վերադառնում բոլոր պատերազմներից: Նա իր ամբողջ սրտով սիրում էր Աստծուն, և Աստված պատերազմի դաշտում միշտ օգնում էր նրան:

Երբ Հուլիանոս կայսրը ուրանում է քրիստոնեությունը և պատվիրում վերստին կուռքերին պաշտել, Քրիստոսը տեսիլքում հայտնվում է Սարգիս զորավարին և պատվիրում. «Թո՛ղ այդ երկիրը և գնա՝ ուր որ ես քեզ կառաջնորդեմ»: Սարգիս զորավարն իր ողջ ունեցվածքը բաժանում է աղքատներին և միակ որդու՝ Մարտիրոսի հետ գալիս է Հայաստան, ապա, որոշ ժամանակ անց, զինվորական ծառայության անցնում պարսից Շապուհ արքայի բանակում: Շապուհը մեծ զորագնդեր է վստահում Սարգիս զորավարին, որովհետև նա միշտ հաղթությամբ էր վերադառնում պատերազմի դաշտից:

Մի օր Շապուհին հայտնում են, որ Սարգիսը հրաժարվում է զոհեր մատուցել կրակին: Շապուհը բարկանում է և հրամայում իր մոտ բերել քաջ զորավարին: Շղթայակապ զորավարին բերում են արքայի մոտ և հրամայում զոհեր մատուցել կրակին: Բայց անվախ զորականը ձեռքերի շղթաներով հարվածում և փշուր-փշուր է անում կրակի բագինը: Մոլեգնած կրակապաշտները հարձակվում և սպանում են Մարտիրոսին և Սարգսին հավատարիմ 14 զինվորների:

Անհավատ արքայի հրամանով Սարգիս զորավարին քաղաքից դուրս են տանում և այնտեղ սպանում: Նահատակության ժամանակ հրաշք է կատարվում: Երկնքից մի հրեշտակ իջնում և լույսով է ողողում Սարգիս զորավարի մարմինը:

Կյանքի վերջին վայրկյաններին զորավարը խնդրում է Աստծուն, որ իր անունը հիշատակող երիտասարդների իղձերը կատարի: Եվ Աստված լսում է նրա խնդրանքը:

Ըստ ժողովրդական ավանդության՝ աղջիկներն ու տղաները Սուրբ Սարգսի՝ շաբաթ օրը կատարվող տոնին նախորդող ուրբաթ երեկոյան աղի բլիթ են ուտում և խնդրում սուրբի բարեխոսությունը, որ նրա օգնությամբ երազում տեսնեն, թե ում հետ են ամուսնանալու: Աղի բլիթ ուտելն, իհարկե, ընդամենը ժողովրդական սովորություն է, և այստեղ կարևորը երիտասարդների՝ աղոթքով Աստծուն կամ սբ Սարգսին ուղղված խնդրանքն է:

Համաձայն եկեղեցական ավանդության՝ սբ Սարգսի նահատակությունից հետո նրա նշխարները ցրվում են տարբեր վայրեր: Դրանց մի մասը Հայաստան է բերում և Աշտարակի Կարբի գյուղի մոտ գտնվող Ուշի վանքում ամփոփում Մեսրոպ Մաշտոցը, ինչ պատճառով էլ այս վանքը կոչվում է Սբ Սարգիս:

Մեր Եկեղեցին Սուրբ Սարգսի տոնը հռչակել է երիտասարդների օրհնության օր: Տոնին բազմաթիվ երիտասարդ տղաներ և աղջիկներ մասնակցում են սուրբ Պատարագի, հաղորդվում են և ստանում քահանայի օրհնությունը:



Սուրբ Ղևոնդյանք

Ղևոնդյանց քահանաների տոնը նախորդում է Վարդանանց հիշատակի օրվան: Ավարայրի ճակատամարտին մասնակից հայ հոգևորականներին հավաքաբար անվանում են Ղևոնդյանք՝ ի պատիվ Ղևոնդ Երեցի, որ ամենատարեցն էր նրանց մեջ: Սուրբ Հոգով ներշնչված՝ նա խանդավառում ու ոգեշնչում էր հայ մարտիկներին՝ քաջությամբ մարտնչելու ի սեր Քրիստոսի, ի սեր Եկեղեցու, հանուն հայրենյաց:

Ղևոնդյանց քահանաները հրաշքներ են գործում Ավարայրի ճակատամարտում: Ղևոնդ Երեցը բախտորոշ ճակատամարտից առաջ այսպես է խոսում հայ մարտիկների հետ. «Եղբայրնե՛ր, չվախենաք մահակից լինելու մեր Փրկչին՝ Քրիստոսին: Որովհետև եթե նրա հետ մեռնենք, նրա հետ էլ կկենդանանանք: Դուք էլ մեր բոլոր սուրբ մարտիրոսների պես հրավիրված եք մաս կազմելու երանելիների դասին, որոնց մասին ասված է. «Պատվական է Աստծո առջև իր սրբերի մահը»:

Ղևոնդ Երեցն իր խոսքով ոգեշնչում է հայ մարտիկներին: Քրիստոսի զինվորները, Սուրբ Հոգով զորացած, աղաղակում են. «Մեր մահը թող հավասարվի արդարների մահվանը, և մեր արյան հեղումը՝ սուրբ մարտիրոսների արյանը: Տերը ընդունելի թող անի այս կամավոր զոհաբերությունը և իր Եկեղեցին հեթանոսների ձեռքը չհանձնի»:

Հայ քաջերը հերոսաբար են մարտնչում իրենց հայրենիքի և հավատի համար: Ավարայրի ճակատամարտում պարսից Հազկերտ թագավորը համոզվում է, որ անհնար է հայ մարդուն կտրել իր Եկեղեցուց և քրիստոնեական հավատից:

Ավարայրի ճակատամարտից հետո Ղևոնդ Երեցին, Հովսեփ կաթողիկոսին, նրանց հետ ևս յոթ հոգևորականների շղթայակապ տանում են Պարսկաստան և բանտարկում:

Ռևանի մոտ հայ հոգևորականների մարտիրոսական վախճանի պահին երկինքը ծածկվում է մթին ամպերով, կայծակներ են փայլատակում, երկիրը դողում է երկրաշարժից, և լույս է իջնում նահատակների վրա:

Մեր Եկեղեցին սրբացրել է Ղևոնդյանց քահանաներին և Ղևոնդյանց տոնը հայ քահանայական դասի տոնն է: Նրանց հիշատակի օրը Հայ Առաքելական Եկեղեցում ավանդաբար քահանայական ձեռնադրություն է կատարվում: Ղևոնդյանց տոնը նշվում է Վարդանանց տոնից երկու օր առաջ՝ երեքշաբթի օրը:



Սուրբ Վարդանանք

Վարդանանց հերոսամարտի պատմությունը գրել է Եղիշե պատմիչը, որ մասնակիցն էր Ավարայրի ճակատամարտի: Նա հասկանում էր, որ շատ կարևոր իրադարձությունների ականատեսն է և որ կատարված կարևոր դեպքերի մասին պետք է իմանան բոլոր նրանք, ովքեր կծնվեն շատ տարիներ և դարեր անց, որպեսզի նմանվեն Վարդանանց հերոսներին:

5-րդ դարում Հայաստանը բաժանված էր երկու մասի: Արևմտյան մասը Բյուզանդիայի տիրապետության տակ էր, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանի:

Այդ ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Հազկերտ Բ-ն: Պարսից թագավորը ցանկանում էր բոլոր հայերին հպատակեցնել իրեն և այնպես անել, որ մոռանան իրենց ազգությունը, կրոնը և լեզուն: Իր նպատակներն իրականացնելու համար Հազկերտը հայ իշխաններից իրեն օգնական ընտրեց դավաճան Վասակ Սյունեցուն՝ նրան հրապուրելով տարբեր խոստումներով:

Եվ ահա մի օր սուրհանդակը Հայաստան բերեց Հազկերտի հրովարտակը, որում ասվում էր, որ հայերը՝ նախարարական և իշխանական ընտանիքներով, իրենց ենթակա շինականներով, մեծով ու փոքրով, հոգևորականներով և զինվորականներով, պետք է հրաժարվեն քրիստոնեական հավատից և ընդունեն զրադաշտությունը, այսինքն՝ արևի և կրակի պաշտամունքը, և դառնան կրակապաշտներ:

Հազկերտի հրամանը լսելուն պես՝ տարբեր գյուղերից և քաղաքներից մեծ բազմություն հավաքվեց Արտաշատում: Եկան նաև հայ իշխանները, նախարարները և զորականները: Եկան նաև քաջ Վարդան զորավարը և Հովսեփ կաթողիկոսը: Բոլորը միասին ժողով արեցին և ուղարկեցին իրենց պատասխանը պարսից արքային. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ այլ դառն հարված»:

Երբ Հազկերտը կարդաց պատասխան այս գրությունը, զայրացած հրամայեց Տիզբոն կանչել հայ նախարարներին: Իսկ ինքը, պարսիկ իշխաններին ու մոգերին հավաքելով թագավորական իր պալատում, սկսեց մտածել, թե ինչպես կործանի Հայաստանը և ինչպես ստիպի հայերին հրաժարվել առ Քրիստոս ունեցած հավատից և պարսիկների նման դառնալ կրակապաշտ:

Ստանալով Հազկերտի հրամանը՝ հայ նախարարները հասկացան, թե ինչ է իրենց սպասում: Բայց եթե չգնային, գիտեին, որ կոչնչացվեին պարսից բանակում ծառայող հայկական զորագնդերը, և հայկական բանակը կորուստներ կկրեր: Ուստի, ժամանակ շահելու համար, պատրաստվեցին հեռավոր ճամփորդության:

Հայոց զորքի քաջ սպարապետ Վարդան Մամիկոնյանը մյուս նախարարների հետ եկավ կաթողիկոսի մոտ՝ օրհնություն ստանալու, երդվեցին մինչև վերջ հավատարիմ մնալ իրենց սուրբ հավատին, իրենց հայրերի Աստծուն և ճանապարհվեցին Տիզբոն:

450 թվականն էր՝ Սբ Ղատկի նախօրեն, Ավագ շաբաթ օրը, երբ հայ նախարարները Վարդան սպարապետի հետ հասան Տիզբոն:

Հազկերտը, կատաղությամբ լցված, հրամայեց հայ նախարարներին զնդանը նետել և ասաց. «Եթե իմ կամքին չենթարկվեք, բոլորիդ կկործանեմ և կոչնչացնեմ ձեր Հայաստան երկիրը»:

Եվ նախարարներն այսպիսի մի որոշում կայացրին. նրանք առերես ձևացրին, թե համաձայն են կրոնափոխ լինելու և ընդունելու զրադաշտությունը:

Հայ նախարարների կրոնափոխության լուրը շատ արագ հասավ Հայաստան, և ողջ ժողովուրդը սուգ մտավ: Մարդիկ լալիս էին, որովհետև չգիտեին, որ իրականում



նախարարները չէին ուրացել Քրիստոսին:

Երբ նախարարները պարսիկ մոգերի ու զինվորների ուղեկցությամբ ոտք դրեցին հայոց հողի վրա, հայ շինականները, Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, քարերով և փայտերով հարձակվեցին և Վարդան Մամիկոնյանի հետ պարսիկներին դուրս շպրտեցին Հայաստանից:

Հայերը սկսեցին պատրաստվել մեծ պատերազմի:

451 թ. Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի երկու կողմերում, բանակ դրեցին հայերն ու պարսիկները: Հայոց բանակում էր նաև Հովսեփ կաթողիկոսը՝ իր եպիսկոպոսների ու քահանաների հետ միասին:

Երբ արեգակը մայր մտավ, հայ հոգևորականները սկսեցին մկրտել բոլոր չմկրտվածներին: Ողջ գիշեր բոլորն աղոթեցին և օրհնեցին Աստծուն: Ապա երդվեցին հավատարիմ մնալ սուրբ Եկեղեցուն և չխնայել նույնիսկ իրենց կյանքը: Այդ երդումի մեջ գրեցին. «Որպես մեր հայր սբ Ավետարանն ենք ճանաչում և մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Հետո իրենց երդման գիրը կնքեցին, դրեցին Ավետարանի մեջ և հանձնեցին Հովսեփ կաթողիկոսին:

Լուսադեմին Պատարագ մատուցվեց, և բոլորը սուրբ Հաղորդություն ստացան: Այդ ժամանակ Վարդանը խոսեց զորքի հետ և ասաց. «Իմ քա՛ջ նիզակակիցներ, չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության վախկոտություն չխառնենք»:

Երբ արևը երևաց երկնքում, Վարդան Մամիկոնյանն առաջնորդեց զորքին դեպի պատերազմի դաշտ: Սկսվեց Ավարայրի ճակատամարտը, որտեղ Վարդանանք կենաց-մահու կռվի էին դուրս եկել իրենցից մի քանի անգամ հզոր պարսից զորքի դեմ: Անհավասար այդ կռվում ընկավ Վարդանը հայոց բանակի 1036 քաջերի հետ: Վարդանանք իրենց մահով փրկեցին հայ ժողովրդին հավատափոխությունից:

Ավարայրի ճակատամարտից հետո հայ հոգևորականները՝ Հովսեփ կաթողիկոսի հետ միասին, բանտարկվեցին և երեք տարի պահվեցին բանտում: Երբ հասավ նաև նրանց նահատակվելու ժամը, երկնքից իջավ հրեշտակների հաղթական բանակը և նրանց երկինք փոխադրեց:

Սարսափով լցվեց Հազկերտը, երբ տեսավ հայերի վճռականությունը, և հետ կանգնեց իր չար մտադրություններից: Նրա զայրույթը թափվեց դավաճան Վասակի գլխին, որին շղթայակապ տարան և գլխատեցին:

Մեր Եկեղեցին հատուկ տոներ է սահմանել ի հիշատակություն Վարդան զորավարի, նրա 1036 զինակիցների և Ղևոնդյանց քահանաների: Քանի որ ձեզանից շատերը կոչվում են Վարդանանց հերոսների անուններով՝ Գարեգին, Արտակ, Հովսեփ, Ղևոնդ, Խորեն, Տաճատ, Արսեն, Վահան..., հետևաբար Վարդանանց տոնը նաև ձեր անվանակոչության տոնն է:

Հայոց Եկեղեցին Վարդանանց տոնը նշում է Մեծ Պահքին նախորդող, այսինքն՝ Բուն Բարեկենդանի կիրակին նախորդող հինգշաբթի օրը: Թեև Ավարայրի հերոսամարտը և Վարդանանց նահատակությունը տեղի է ունեցել մայիսին, սակայն մեր Եկեղեցու հայրերի իմաստուն տնօրինությամբ Ղևոնդյանց և Վարդանանց տոները կատարվում են Պահքին նախորդող շաբաթվա ընթացքում, որպեսզի Վարդանանց հոգով զորացած՝ հայ հավատացյալները մտնեն Մեծ Պահքի շրջանը:



ՄԵԾ ՊԱՀՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

Բուն բարեկենդան

Մեծ Պահքի առաջին կիրակի

Կան տարբեր պահքեր՝ Ծննդյան, Առաջավորաց, Հիսնակաց և այլն: Սրանց նախորդող կիրակին կոչվում է բարեկենդան, որին հաջորդող երկուշաբթի օրվանից էլ սկսվում է պահքը:

Քանի որ բոլորից երկարն ու տևականը Մեծ Պահքն է, ուստի և գլխավոր բարեկենդանն էլ նրան նախորդող կիրակին է, որը կոչվում է Բուն բարեկենդան:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն, ուրախության և զվարճանքի օր: Այն մեզ հիշեցնում է Ադամի ու Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Բարեկենդանին ամենուր խնջույքի ճոխ սեղաններ են բացվում, նշանդրեքի հանդեսներ կազմակերպվում:

Անցյալում, ըստ սովորության, հնչում էր զուռնան և բոլորին հրավիրում շուրջպարի: Բայց օրվա գլխավոր զվարճությունը խաղերը, թատերական ծիծաղաշարժ ներկայացումներն ու դիմակահանդեսներն էին: Բուն բարեկենդանին արված կատակներից ոչ ոք չի նեղանում:

Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան ժամերգությունից հետո սկսվում է Մեծ Պահքը: Հնում բարեկենդանի ավարտին տանտիրուհիները եռացրած ջրով լվանում էին տան ափսեները, թավաները և ընդհանրապես ողջ ամանեղենը, որպեսզի դրանց մեջ յուղի շերտ մնացած չլինի և այդ յուղով սկսված պահքը չլուծվի:

Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրորդ կիրակի

(Ծննդոց 3-րդ գլուխ)

Աստված դրախտային ճոխության մեջ բնակեցրեց Ադամին ու Եվային և պատվիրեց նրանց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց Բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք»:

Սակայն բանսարկուն՝ օձը, որ երկրի բոլոր կենդանիներից ամենախորամանկն էր, որոշեց կործանել մարդկանց: Նա եկավ Եվայի մոտ և խաբելով համոզեց ճաշակել Բարու և չարի գիտության ծառի պտղից: «Այն օրը, երբ ուտեք դրանից,- համոզում էր նա,- կբացվեն ձեր աչքերը, և դուք էլ կդառնաք աստվածների նման, կիմանաք չարն ու բարին»:

Եվան գայթակղվելով մոռացավ Աստծո պատվերը: Նրան շատ ախորժելի թվաց ծառի պտուղը: Մարդկության նախամայրը քաղեց պտուղը, կերավ և մի մասն էլ տվեց Ադամին:

Աստված իմացավ այդ մասին, շատ բարկացավ և ասաց Ադամին. «Քանի որ լսեցիր կնոջդ և կերար արգելված պտուղը, թող անիծյալ լինի երկիրը քո արարքի պատճառով, տանջանքով հայթայթես սնունդդ քո կյանքի բոլոր օրերին»:

Աստված պատժեց Ադամին ու Եվային և արտաքսեց նրանց դրախտից, ուր ապրում էին ուրախ ու երջանիկ: Եվ նրանք դարձան հասարակ մահկանացուներ, քանի որ իրենց անհնազանդության պատճառով զրկվեցին դրախտում հավիտենապես ապրելուց և մահը ժառանգեցին:



Անառակի կիրակի

Մեծ Պահքի երրորդ կիրակի
(Ղուկաս 15.11-32)

Կար մի շատ հարուստ մարդ: Նա ուներ դաշտեր, այգիներ և բազմաթիվ անասուններ: Նրա տնտեսությունում աշխատում էին բազմաթիվ մշակներ: Այդ մարդը երկու որդի ուներ: Մի օր կրտսեր որդին եկավ հոր մոտ և ասաց. «Տո՛ւր ինձ քո ունեցվածքից ինձ հասնող բաժինը»: Հայրը կիսեց ունեցվածքը և մի մասը հանձնեց որդուն: Տղան, փողի վերածելով ամեն ինչ, ճանապարհ ընկավ դեպի հեռու ու անծանոթ երկրներ: Այնտեղ նա ապրեց զվարճությունների մեջ, վատնեց հոր հարստությունը և մատնվեց չքավորության: Ստիպված, իբրև խաշնարած, ծառայության մտավ մի ագարակատիրոջ մոտ: Խեղճը քաղցած էր մնում և իրավունք չուներ սնվելու նույնիսկ եղջերենու պտղով, որով խոզերին էին կերակրում:

Օրերից մի օր էլ մեծահարուստի տղան հիշեց հայրական իր տունը, այնտեղ անցկացրած իր անհոգ օրերը, հիշեց իր հորն ու եղբորը: Եվ զղջմամբ ու արտասվելով՝ բռնեց տունդարձի ճանապարհը:

Հայրը հեռվից տեսավ իր մոլորյալ որդուն, խղճաց, վազեց ընդառաջ, գրկեց ու համբուրեց նրան: Իսկ որդին ներողություն խնդրեց հորից իր ցոփ ու շվայտ կյանքի ու հոր հարստությունը վատնելու համար: Հայրը հրամայեց պարարտ եզը մորթել և ուրախության սեղաններ գցել. «Իմ որդին մեռած էր՝ կենդանացավ, կորած էր՝ գտնվեց»,- հրճվանքով ասում էր հայրը:

Երեկոյան ագարակից վերադառնալիս ավագ որդին լսեց ուրախության ձայներ: Իր մոտ կանչելով ծառաներից մեկին՝ ամեն ինչ իմացավ և բարկացավ այնքան, որ չէր ուզում ներս մտնել: Հոր աղաչանքներին նա այսպես պատասխանեց. «Տարիներ ի վեր ծառայում և օգնում եմ քեզ, բայց ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի: Իսկ քո անառակ որդու համար պարարտ եզը մորթեցիր»:

Հայրը բացատրեց ավագ որդուն, որ ինքը հավասարապես սիրում է իր երկու զավակներին էլ: «Պարզապես պետք է ուրախ լինել,- ասաց հայրը նեղացած որդուն,- որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր՝ գտնվեց»:

Պատմելով այս առակը՝ Հիսուսն այլաբանորեն ասում է, որ բոլորիս հայրն Աստված է: Նա սիրում է իր զավակներին և ներում է բոլոր նրանց, ովքեր զղջում են իրենց սխալների համար և անառակ որդու նման վերադառնում են իրենց սիրող Հոր մոտ:



Տնտեսի կիրակի

Մեծ Պահքի չորրորդ կիրակի
(Ղուկաս 16.1-8)

Մի հարուստ տանուտեր կար, ով իր տնտեսության բոլոր գործերը վստահել էր իր տնտեսին: Նա հետևում էր տնտեսությանը, հսկում էր, որ ժամանակին հնձեն արտի ցորենը, ջրեն այգիները, անասուններին փարախ քշեն և կերակրեն:

Մի օր մարդիկ եկան տանտիրոջ մոտ և ամբաստանեցին տնտեսին՝ ասելով, թե նա լավ չի կատարում իր պարտականությունները և վատնում է տիրոջ ունեցվածքը: Տանուտերը շատ բարկացավ: Իր մոտ կանչեց տնտեսին և ասաց. «Տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող»:

Գլխիկոր դուրս եկավ տնտեսը և մտածեց, որ այլևս չի կարող հոգալ իր ապրուստը: Բայց շուտով հասկացավ, թե ինչ պիտի անի, որպեսզի աշխատանքից հեռացվելուց հետո մարդիկ բարեհաճ լինեն իր հանդեպ: Հնարամիտ տնտեսը որոշեց օգնել իր տիրոջ պարտապաններին, թեթևացնել նրանց պարտքերը:

Կանչեց իր մոտ մեկին, որ հարյուր տակառ ձեթ էր պարտք տիրոջը, հրամայեց, որ մուրհակը պատռի և նորը գրի, սակայն հարյուր տակառի փոխարեն՝ հիսուն: Մարդը խորին շնորհակալությամբ հեռացավ: Կանչեց մի ուրիշին, հարցրեց, թե որքան պարտք ունի, և թույլ տվեց, որ հինգ հարյուր պարկ ցորենի փոխարեն նոր մուրհակում գրի չորս հարյուր պարկ: Հետո երրորդին, չորրորդին... Բոլորը շնորհակալությամբ և երախտագիտությամբ լցվեցին տնտեսի հանդեպ:

Իսկ տանուտերը, իմանալով տնտեսի արածը, գովեց նրա հնարամտությունը և ներեց նրան:

Աստված սովորեցնում է՝ աշխարհի բարիքները կիսիր մարդկանց հետ, ձեռք մեկնիր ընկերոջդ դժվարին պահին, և Աստված էլ կօգնի քեզ՝ քո նեղության օրերին:



Դատավորի կիրակի

Մեծ Պահքի հինգերորդ կիրակի

(Ղուկաս 18.1-8)

Մի փոքրիկ քաղաքի անհյուրընկալ մի խրճիթում միայնակ ապրում էր մի այրի կին:

Նա դժվարությամբ էր հոգում իր ապրուստը: Իսկ չար մարդիկ նրան բազմաթիվ նեղություններ էին պատճառում և վշտացնում:

Այդ նույն քաղաքում ապրում էր մի անիրավ դատավոր, ով ոչ Աստծուց վախենում էր, ոչ էլ մարդկանցից ամաչում: Նա խարդախ էր և կաշառակեր:

Եվ ահա մի օր էլ այրին եկավ այդ դատավորի մոտ և խնդրեց նրան, որ պաշտպանի արդարությունը և իրեն ազատի իր թշնամու ձեռքից: Բայց անարդար դատավորը գիտեր, որ այրին ոչ կարող է կաշառք տալ, ոչ էլ հոգալ դատարանի ծախսերը: Նա հրամայեց դուրս հանել կնոջը: Սակայն համառ կինը նորից եկավ դատավորի մոտ, աղաչեց-պաղատեց, որ իր խնդիրն արդարությամբ լուծի: Անտարբեր դատավորը ուշադրություն չէր դարձնում կնոջ խնդրանքին: Իսկ այրին չէր հոգնում, չէր վհատվում: Նա դարձյալ ու դարձյալ գալիս էր դատավորի մոտ և ասում, որ հանգիստ չի թողնի նրան, մինչև չավարտի գործը: Եվ ահա, մի օր էլ, դատավորը հոգնեց կնոջ համառությունից և ասաց. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այս կինն ինձ շատ է հոգնեցրել, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա և ինձ չանհանգստացնի»:

Այրի կինն իր համառությամբ ստիպեց դատավորին անցկացնել դատը և ազատել իրեն թշնամուց:

Այս առակի այլաբանական իմաստն այն է, որ եթե անգամ անիրավ դատավորը ստիպված եղավ լսել այրի կնոջ անվերջանալի գանգատները, ապա որքան առավել ամենաբարի Աստված կլսի իրեն ուղղված մեր խնդրանքները: Հետևաբար աղոթքով պետք է շարունակ դիմել Տիրոջը:

«Խնդրե՛ք Աստծուն, և Նա կտա ձեզ, փնտրե՛ք և կգտնեք, բախե՛ք, և կբացվի ձեր առաջ, որովհետև ով ուզում է՝ ստանում է, ով փնտրում է՝ գտնում է, և ով բախում է, նրա առջև բացվում է»,- սովորեցնում է Հիսուսը:



Գրիգոր Լուսավորչի մուտքը վիրապ

Երբ Մեծ Հայքի Տրդատ արքան վերադարձավ հունաց կողմերից և, պարտության մատնելով պարսից մեծաքանակ զորքը, վերանվաճեց հայրենի տերությունը, իր այս հաղթանակը վերագրեց հեթանոս աստվածների զորությանը և իշխանների ու մեծամեծների հետ եկավ զոհեր մատուցելու Անահիտի մեհյանում: Թագավորական շքախմբի մեջ էր նաև Գրիգորը, ով դեռ օտարության մեջ, կամավոր, հնազանդությամբ սպասավորում էր Տրդատին:

Երբ Գրիգորը հրաժարվեց ոստեր ընծայել Անահիտի արձանին, թագավորը կանչեց Գրիգորին և ասաց. «Դու այսքան տարի հավատարմությամբ ծառայել ես ինձ, և ես մտադիր եմ վարձատրել քեզ, բայց դու պետք է պաշտես այն աստվածներին, որոնց ես եմ պաշտում»: Եվ հրաման տվեց Գրիգորին, որ պսակներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտ դիցուհուն: Իսկ Գրիգորը պատասխանեց նրան և ասաց. «Դուք միակ, ճշմարիտ Աստծո ստեղծած բարիքներն եք վայելում և նրան երկրպագելու փոխարեն պաշտում եք ձեր իսկ ստեղծած կուռքերը, որոնք ոչինչ են, ո՛չ չար և ո՛չ էլ բարի գործեր կարող են անել»: Այս խոսքերից սաստիկ զայրացավ Տրդատ արքան և սպառնագին ասաց. «Չեմ ներելու իմ աստվածներին հասցրած անարգանքը և քո հանդգնության համար պատժելու եմ քեզ»:

12 տեսակ անտանելի տանջանքների ու խոշտանգումների ենթարկվեց Գրիգորը, բայց համբերությամբ ու աղոթքով դիմացավ և չդադարեց երկրպագել իր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Երբ թագավորը տեսավ, որ զուր են բոլոր պատիժները, հրամայեց իջեցնել նրան Արտաշատ բերդի խոր վիրապը (այսինքն՝ փոսը), ուր չարագործներին էին նետում: Հեղձուցիչ, խորունկ այդ գբում, օձերի ու կարիճների մեջ, առանց հաց ու ջրի ոչ ոք չէր կարող կենդանի մնալ: Բայց Աստված մենակ չթողեց իր ընտրյալին: Այրի մի կին երազում հրաման ստացավ խոր վիրապում բանտվածին ամեն օր մի նկանակ հաց բերել: Այդպես, Տիրոջ կամքով Գրիգորն անվնաս մնաց մահապարտների այդ վիրապում 13 տարի՝ մինչև իր փառավոր ելքը: Գրիգորի հոգին չտկարացավ խոր վիրապում, որովհետև նրա տանջանքներն ու նեղությունները Աստծուն փառաբանելու և Նրա խոսքը տարածելու համար էին:

Գրիգոր Լուսավորչի՝ վիրապը նետվելու հիշատակը մեր Եկեղեցին ամեն տարի կատարում է Մեծ Պահքի վեցերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը:



Գալստյան կիրակի

Մեծ Պահքի վեցերորդ կիրակի

(Մատթ. 24.29-31, Մարկ. 13.4-27, Ղուկ. 21.25-28)

Հիսուսը մի օր խոսեց Երուսաղեմի Տաճարի կործանման մասին: Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսն ու Անդրեասը մոտեցան Հիսուսին և ասացին. «Ասա՛ մեզ, վարդապե՛տ, ե՞րբ կլինի այդ և ինչպե՞ս կկատարվի»: Իսկ Հիսուսը նրանց պատասխանեց. «Այդ օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի, ո՛չ հրեշտակները, ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը»: Ապա նկարագրեց, թե ինչպես կկատարվի Որդու երկրորդ գալուստը:

Այդ օրերին արեգակը կխավարի, և լուսինը կդադարի լույս տալ: Երկնքի աստղերը մեկ-մեկ վայր կթափվեն երկնքից: Եվ բոլոր ազգերը կտեսնեն, թե ինչպես ամպերի վրա բազմած՝ գալիս է Մարդու Որդին՝ զորությամբ և մեծ փառքով: Եվ այն ժամանակ կուղարկի հրեշտակներին աշխարհի չորս կողմը, որ փողեր հնչեցնելով՝ ձայն տան բոլոր ընտրյալներին, որպեսզի շտապեն հավաքվել Մարդու Որդու մոտ: Նա կիջնի երկնային Իր բարձունքներից՝ դատելու արդարներին և մեղավորներին: Եվ կնստի Մարդու Որդին իր փառքի գահին, իսկ Նրա առջև կհավաքվեն բոլոր ազգերը, և Նա արդարներին իր աջ կողմում կկանգնեցնի, իսկ մեղավորներին՝ ձախ: Ապա դառնալով աջ կողմում կանգնածներին՝ կասի. «Եկե՛ք, իմ Հո՛ր օրհնյալներ, ժառանգե՛ք երկնքի արքայությունը, որովհետև կարիքավորի նկատմամբ բարի գտնվեցիք, քաղցածին ուտելիք տվեցիք, հիվանդին խնամեցիք, ծարավածին ջուր խմեցրիք, օտարին ձեր մեջ առաք»: Իսկ ձախ կողմում կանգնածներին կասի. «Անիծյալնե՛ր, գնացե՛ք դեպի հավիտենական տանջանք, որովհետև կարիքավորի նկատմամբ բարի չգտնվեցիք, քաղցածին ուտելիք չտվեցիք, հիվանդին չխնամեցիք, ծարավածին ջուր չխմեցրիք, օտարին ձեր մեջ չառաք»: Եվ երբ իր դատն ավարտի, մեղավորները կմատնվեն հավիտենական տանջանքի, իսկ արդարները հավիտենական կյանք կստանան: Եվ այլևս չի լինի ո՛չ հիվանդություն, ո՛չ մահ:

Ծաղկազարդ

(Մատթ. 21.1-11, Մարկ. 11.1-11, Ղուկ. 19.29-40, Հովհ. 12.12-19)

Զատկից մեկ շաբաթ առաջ Հիսուսն իր աշակերտների հետ մոտեցավ Երուսաղեմին: Երուսաղեմը այն քաղաքն էր, որտեղ պետք է տեղի ունենար ամենամեծ և ամենակարևոր իրադարձությունը:

Ձիթենյաց լեռան մոտ Հիսուսը կանչեց աշակերտներից երկուսին և ուղարկեց Բեթփագե գյուղը: «Գնացե՛ք ձեր դիմաց գտնվող գյուղը,- ասաց Նա,- այնտեղ կապված մի ավանակ կտեսնեք, որի վրա ոչ մի մարդ դեռևս չի նստել, արձակեցե՛ք և բերե՛ք»: Ինչպես Հիսուսն ասաց աշակերտներին, նրանք այդպես էլ արեցին:

Բերեցին ավանակը, վրան զգեստներ փռեցին, և Հիսուսը, վրան նստած, մտավ Երուսաղեմ: Նրան ցնծությամբ դիմավորեց ժողովուրդը. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում. «Օրհնությո՞ւն Դավթի Որդուն, օրհնյա՞լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Խաղաղությո՞ւն երկնքում և փա՞ռք բարձունքներում»:

Շատերն էլ տարակուսած հարցնում էին նրա մասին. «Ո՞վ է սա»: Իսկ նրան փառաբանողները պատասխանում էին. «Նա Հիսուս մարգարեն է՝ Գալիլեայի Նազարեթ քաղաքից»: Շատերն էլ վկայեցին, որ նա Ղազարոսին վերակենդանացրել է և զարմանալի հրաշքներ գործել: Այդ ժամանակ փարիսեցիներն իրար մեջ ասացին. «Տեսնո՞ւմ եք, որ ոչինչ անել չենք կարողանում, ողջ ժողովուրդը նրա հետևից է գնում»: Եվ, դառնալով Հիսուսին, ասացին. «Սաստի՛ր քո աշակերտներին, որ դադարեն փառաբանել քեզ»: Իսկ Հիսուսը նրանց պատասխանեց. «Ասում եմ ձեզ, որ եթե նրանք լռեն էլ, քարե՛րը պիտի աղաղակեն»:

Ծաղկազարդի տոնին սբ Պատարագ է մատուցվում, և մանուկները, գնալով եկեղեցի, հատուկ օրհնություն են ստանում հոգևորականներից: Այդ օրը մարդիկ ուռենու բողբոջած ոստերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ: Ծաղկազարդի օրը եկեղեցիներն ու նրանց շրջակայքը գարնանային զանազան ծաղիկներով են զարդարվում, քանի որ ամենուր կարելի է տեսնել ծաղկավաճառների, որոնցից գարնանային ծաղիկների փնջեր գնելով՝ մարդիկ դրանք միմյանց են նվիրում:

Ավագ երկուշաբթի

(Մատթ. 21.18-19, Մարկ. 11.12-14, 20-24)

Ավագ շաբաթը Մեծ Պահքի վերջին շաբաթն է, որի ընթացքում Տերն առաքյալների հետ մինչև իր հարությունը վերջին անգամ սեղան նստեց, ապա մատնվեց, ձերբակալվեց, դատվեց, անարգվեց և չարչարանքներով խաչ հանվեց, ինչ պատճառով այս շաբաթը կոչվում է նաև Չարչարանաց շաբաթ:

Այս շաբաթվա յուրաքանչյուր օրն էլ իր հերթին անվանվում է «Ավագ»:

Ավագ երկուշաբթին առնչվում է Չորացած թզենու առակի հետ:

Մի անգամ, երբ Հիսուսն իր աշակերտների հետ դուրս էր գալիս Բեթանիայից, քաղց զգաց: Հեռվում նկատեց մի տերևախիտ թզենի: Մոտեցավ, որ թուզ քաղի, բայց ծառի վրա ոչ մի պտուղ չգտավ, միայն տերևներ էին: Հիսուսն ասաց. «Այսուհետև քեզանից հավիտյան պտուղ թող չլինի»:

Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ առաքյալներն իրենց Ուսուցչի հետ անցնում էին նույն ճանապարհով, տեսան, որ թզենին արմատից չորացել է: Այդ ժամանակ Պետրոսը հիշեց Հիսուսի անեծքը և ասաց. «Ուսուցի՛չ, ահա այն թզենին, որ անիծեցիր, չորացել է»: Հիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե հավատ ունենաք և չերկմտեք, ոչ միայն կանեք այդ թզենուն պատահածը, այլ թեկուզ և այդ լեռանն ասեք՝ ելիր ու ծովն ընկիր, կկատարվի: Եվ ամեն ինչ, որ հավատով խնդրեք աղոթքի մեջ, կստանաք»:



Ավագ երեքշաբթի

(Մատթ. 25.1-13)

Ավագ երեքշաբթի օրը հիշատակվում է Տասը կույսերի առակը, ովքեր լապտերները ձեռքներն առած՝ փեսային դիմավորելու ելան: Նրանցից հինգը հիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն: Հիմարները լապտերներն առան, բայց իրենց հետ ձեթ չվերցրին: Իսկ իմաստուններն իրենց լապտերների հետ միասին ամաններով ձեթ վերցրին: Եվ երբ փեսան ուշացավ, ամենքը քուն մտան: Կեսգիշերին ձայն լսվեց. «Ահա՛ փեսան գալիս է, նրան դիմավորելո՛ւ ելեք»: Բոլորն արթնացան և իրենց լապտերները կարգի բերեցին: Հիմարները տեսան, որ իրենց լապտերները հանգչում են, և իմաստուն կույսերից ձեթ խնդրեցին: Բայց իմաստունները մտածեցին, որ եթե տան, ձեթն իրենց էլ չի բավականացնի, և ասացին. «Գնացեք վաճառողների մոտ և ձեզ համար գնեք»: Երբ նրանք գնացին, փեսան եկավ, և ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան: Դռները փակվեցին: Հետո եկան նաև հիմար կույսերը և ասացին. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց արա»: Բայց Տերը պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ձեզ չեմ ճանաչում»:

Երբ պատմությունն ավարտեց, Հիսուսն ասաց Իր աշակերտներին. «Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը»:

Այդպես Աստված սովորեցնում է մեզ հավատալ և սպասել Որդու գալուստին և միշտ պատրաստ լինել, որպեսզի արժանանանք Աստծո արքայության մեջ հավիտյան ապրելուն:

Այս առակում ձեթը խորհրդանշում է բարեգործությունը. իմաստուն կույսերը փեսայի՝ Քրիստոսի հետ հարսանիքի սրահ մտան, այսինքն Քրիստոսի երկրորդ գալստյանը փրկության արժանացան, որովհետև նրանց լապտերներում ձեթ կար, այսինքն՝ բարի գործեր էին կատարել, իսկ հիմար կույսերը թեև հավատն ունեին, հավատով սպասում էին, սակայն մերժվեցին, որովհետև բարի գործեր չէին կատարել, իսկ հավատքի ջահը՝ լապտերը, վառ է մնում բարի գործով, ինչպես որ Հակոբոս առաքյալն է ասում. «Հավատքն առանց գործի մեռած է»:



Ավագ չորեքշաբթի

(Մատթ. 26.6-13, Մարկ. 14.3-9, Հովհ. 12.1-8)

Ավագ չորեքշաբթի օրը հիշատակվում է Բեթանիայում մեղավոր մի կնոջ կողմից Հիսուս Քրիստոսի օծումը և նրա մատնությունը Հուդայի կողմից:

Զատկից վեց օր առաջ Հիսուսը եկավ Բեթանիա: Նա որոշեց ընթրել բորոտ Սիմոնի տանը:

Երբ բոլորը նստած ընթրում էին, ներս մտավ մի կին՝ ձեռքին նարդոսի թանկարժեք յուղով լեցուն մի սրվակ: Հրեաների մեջ տարածված սովորություն կար. պատվարժան հյուրին օծում էին անուշահոտ յուղերով:

Կինը մոտեցավ Հիսուսին և սրվակի յուղը լցրեց Հիսուսի գլխին:

Կնոջ արածը շատերը շռայլություն համարեցին: Աշակերտներից մեկը՝ Հուդան, ով մատնելու էր Հիսուսին, առաջ գալով ասաց. «Ինչո՞ւ այդ յուղը չվաճառվեց երեք հարյուր արծաթով և չբաժանվեց աղքատներին»:

Հիսուսը լսեց և ասաց հավաքվածներին. «Իզուր եք բարկանում այս կնոջ վրա: Նա կամեցավ ինձ պատվել: Սա կատարվեց՝ ցույց տալու համար, որ շուտով պիտի թաղվեմ»:

Իսկ Հուդա Իսկարիովտացին գնաց հրեա քահանայապետերի մոտ և 30 արծաթե դրամի դիմաց մատնեց Հիսուսին: Այսիսկ պատճառով Ավագ չորեքշաբթին նաև Մատնության օր է անվանվում:



Ավագ հինգշաբթի

(Մատթ. 26.17-30, Մարկ. 14.12-26, Ղուկ. 22.7-23, Հովհ. 13.21-30, Ա Կորնթ. 11.23-25)

Երբ եկավ Բաղարջակերաց օրը, Հիսուսը կանչեց աշակերտներից երկուսին՝ Պետրոսին ու Հովհաննեսին, և ուղարկեց նրանց զատկական ընթրիքը պատրաստելու: Աշակերտները հարցրին. «Տե՛ր, որտե՞ղ ես կամենում, որ պատրաստենք զատկական ընթրիքը»: Հիսուսն ասաց նրանց. «Քաղաք մտնելիս ձեզ մի մարդ կպատահի՝ ջրի սափորը ձեռքին, գնացե՛ք և մտե՛ք այն տունը, ուր նա կմտնի: Այնտեղ կտեսնեք կահավորված մի սենյակ, այդտեղ էլ պատրաստեք»:

Աշակերտներն արեցին այնպես, ինչպես Հիսուսն իրենց ասել էր: Եվ Տերն Իր աշակերտների հետ մտավ վերնատուն՝ զատկական գառը ճաշակելու: Հիսուսը մի սրբիչ վերցնելով՝ կապեց մեջքին, սափորից ջուր լցրեց կոնքի մեջ և սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ ու սրբել մեջքին կապած սրբիչով:

Երբ սեղան նստեցին, Հիսուսը վերցրեց հացը, օրհնեց, կտրեց ու բաժանեց աշակերտներին՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Ապա, վերցնելով գինու բաժակը, տվեց նրանց և ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է իմ արյունը, որ թափվում է շատերի մեղքերի թողության համար»: Այդպես Հիսուսը հաստատեց Հաղորդության խորհուրդը, որպեսզի սուրբ Պատարագի միջոցով հաղորդվենք Տիրոջ Մարմնին ու Արյանը:

Ավագ հինգշաբթի օրը՝ սբ Պատարագի ընթացքում, եկեղեցու ավագ հոգևորականը, Հիսուսի հետևողությամբ, լվանում է տասներկու հոգու մեկական ոտքերը: Ոտնլվայի արարողությանը օրհնված յուղ է բաշխվում հավատացյալներին:



Ավագ ուրբաթ

(Մատթ. 27.32-44, 57-61, Մարկ. 15.21-32, 42-47, Ղուկ.23.26-49, 50-56, Հովհ.19.17-27, 38-42)

Ավագ ուրբաթ օրը հիշատակվում են Տիրոջ ձերբակալությունը, չարչարանքները, խաչելությունն ու մահը: Ավետարանիչները նկարագրում են, որ երբ Հիսուսը հոգին ավանդեց, թեև կեսօր էր, արևը խավարեց, և մութը պատեց երկիրը: Այդ պատճառով էլ Ավագ հինգշաբթի օրը երեկոյան եկեղեցիներում կատարվում է Խավարման արարողություն, որի ընթացքում հիշատակվում է, թե ինչպես աշակերտները թողեցին Հիսուսին և հեռացան, ինչպես նա ձերբակալվեց, չարչարանքի ենթարկվեց և ի վերջո խաչվեց: Քանի որ ըստ եկեղեցական օրացույցի երեկոյան ժամերգությունից հետո օրը փոխվում է, ապա այս դեպքերին վերաբերող արարողությունը, որը կոչվում է Խավարում, կատարվում է հինգշաբթի երեկոյան:

Աստվածորդին, որ Հուդայի մատնությամբ ձերբակալվել էր, բերվեց պոնտացի Պիղատոսի մոտ: Քահանայապետերն ու իշխաններն ասացին կուսակալին, որ Հիսուսը մոլորեցնում է ազգին, արգելում է հարկեր վճարել և հայտարարում է, թե ինքը Քրիստոս արքան է: Պիղատոսը հարցրեց Հիսուսին. «Դո՞ւ ես հրեաների թագավորը»: Հիսուսը պատասխանեց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, իմ հետևորդները կմարտնչեին ինձ համար»:

Կուսակալը սովորություն ուներ տոնի առթիվ ազատ արձակել բանտարկյալներից մեկին: Դառնալով ժողովրդին՝ նա ասաց, որ մեղք չի գտնում Հիսուսի գործերում: Բայց ժողովուրդը գոռում էր՝ Հիսուսին խաչիր, Բարաբբային արձակիր: Բարաբբան մի խռովարար էր և բանտարկվել էր սպանության համար: Պիղատոսը, տեսնելով, որ վրդովված բազմության դեմ ոչինչ անել չի կարող, ջուր վերցրեց, ձեռքերը լվաց և ասաց. «Այդ արդարի արյունից ես անմասն եմ, դո՛ւք գիտեք»: Եվ Հիսուսին գանակոծելով տարան խաչելու: Գլխին փշե պսակ դրին, ծիրանի հագցրին և ապտակելով ծաղրում էին՝ ասելով. «Ողջո՜ւյն, հրեաների՛ թագավոր»:

Հիսուսն, իր խաչը կրելով, բարձրացավ այն վայրը, որ Գագաթ էր կոչվում, իսկ եբրայերեն՝ Գողգոթա: Ամբողջ ճանապարհին ծաղրում էին նրան և ասում. «Ուրիշներին էիր ազատում, ինքդ քե՛զ ազատիր, եթե Քրիստոսն ես՝ Աստծո օծյալը»:

Հիսուսին խաչեցին երկու չարագործների հետ:

Հոգին ավանդելուց առաջ Հիսուսը բարձր ձայնով ասաց. «Հա՛յր, քեզ եմ ավանդում իմ հոգին»: Երբ սա ասաց, հոգին ավանդեց: Երկիրը ցնցվեց, ժայռերը ճեղքվեցին, և մեծ երկրաշարժ եղավ: Ամբողջ երկիրը խավարը պատեց: Հարյուրապետը, տեսնելով, թե ինչ կատարվեց, սաստիկ վախեցավ և ասաց. «Արդարև՛ սա Աստծո Որդին էր»: Իսկ ժողովուրդը, որ նրա մահն էր պահանջում, ողբալով ու կուրծքը ծեծելով իջավ Գողգոթայի բարձունքից:

Ուրբաթ օրը՝ երեկոյան, Հովսեփ անունով արդար ու բարեպաշտ մի մարդ եկավ Պիղատոսի մոտ և խնդրեց Հիսուսի մարմինը:

Նա պատանքի սպիտակ կտոր գնեց, Հիսուսին իջեցրեց խաչից և փաթաթեց մարմինը: Խաչելության վայրից քիչ հեռու մի ժայռափոր գերեզմանի մեջ դրեց Հիսուսի մարմինը: Ապա մի մեծ քարով փակեց գերեզմանի մուտքը: Քահանայապետերն ու փարիսեցիները քարայրի մուտքի մոտ հսկողություն սահմանելու համար Պիղատոսից զինվորներ խնդրեցին, որ չլինի թե աշակերտները գիշերով գան, մարմինը գողանան ու ժողովրդին ասեն, թե մեռելներից հարություն առավ: Եվ գալով գերեզմանատեղի՝ վեմը կնքեցին՝ զինվորներ նշանակելով: Տիրոջ թաղման հիշատակի արարողությունը կատարվում է Ավագ ուրբաթ օրը՝ երեկոյան:

Քրիստոսի խաչելության օրը՝ Ավագ ուրբաթը, տխրության օր է բոլոր քրիստոնյա հավատացյալների համար:

Այդ օրը պատարագ չի մատուցվում, որովհետև Քրիստոսն ինքը պատարագվեց խաչի վրա:



Ավագ շաբաթ

Ավագ շաբաթ օրը՝ առավոտյան, դարձյալ հիշատակվում է Հիսուսի թաղումը, իսկ երեկոյան կատարվում է Սբ Զատկի Ճրագալույցի Պատարագը, որով արդեն ավետվում է Աստվածորդու հարությունը:

Այսպիսով, եզրափակվում է Տիրոջ չարչարանքների շաբաթը, և սկսվում է Հարության տոնախմբությունը:



Սուրբ Զատիկ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարութիւնը

(Մատթ. 28.1-20, Մարկ. 16.1-18, Ղուկ. 24.1-12, Հովհ. 20.1-10)

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարութիւնը Եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

Կիրակի օրը՝ վաղ առավոտյան, յուղաբեր կանայք եկան գերեզման, որպեսզի օծեն Հիսուսի մարմինը: Այդ ժամանակ մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ հրեշտակը, երկնքից իջնելով, մի կողմ գլորեց քարայրի հսկա քարը, նստեց դրա վրա և խոսեց կանանց հետ. «Գիտեմ, որ փնտրում եք Հիսուսին, ով խաչվեց: Այստեղ չէ նա, քանի որ հարություն առավ»: Զարհուրած և հիացած կանայք վերադարձան և տեսածի ու լսածի մասին պատմեցին առաքյալներին: Պետրոսը շտապեց գերեզման, բայց այնտեղ գտավ միայն պատանքի կտավները, որոնց մեջ փաթաթել էին Հիսուսին:

Նույն օրը երեկոյան, երբ հրեաների ահից աշակերտները փակվել էին մի տան մեջ, Հիսուսը կանգնեց ապշահար առաքյալների առջև և խոսեց նրանց հետ. «Ինչո՞ւ է ձեր սրտերում կասկած ծագում: Տեսե՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև ես նույնն եմ, շոշափեցե՛ք ինձ և տեսե՛ք, որովհետև ոգին մարմին ու ոսկորներ չունի, իսկ ես ունեմ»: Աշակերտները մոտենալով նրան երկրպագեցին: Քառասուն օր հետո՝ համբարձումից առաջ, Հիսուսը պատվիրեց նրանց. «Գնացե՛ք ուրեմն, աշակե՛րտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտե՛ք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց այն ամենը, ինչ որ ձեզ պատվիրեցի, ամբողջ աշխարհով մեկ քարոզե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց: Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, իսկ ով չհավատա, պիտի դատապարտվի»:

Ավանդության համաձայն՝ Մարիամ Մագդաղենացին մեկնում է Հռոմ՝ Ավետարանը քարոզելու: Նա ներկայանում է Տիբերիոս կայսրին, վկայում է քրիստոնեական իր հավատը, նվիրում կարմիր ներկած մի ձու և ողջունում՝ ասելով. «Քրիստոսը հարություն առավ մեռելներից»: Սբ Հարության տոնական սեղանների գլխավոր զարդարանքը կարմիր ներկված ձվերն են: Երիտասարդներն այդ օրը ձվախաղ են կազմակերպում և Հարության շարականներ երգում:

Զատկի Պատարագից հետո տնետուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Սբ Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց: Օրհնյալ է հարությունն Քրիստոսի»:



Սուրբ Խաչի Երևման տոն

Երուսաղեմի Մաքսիմոս հայրապետի մահից հետո հայրապետական աթոռին նստեց Կյուրեղ անունով մի աստվածապաշտ, սուրբ և իմաստուն հոգևորական:

Սբ Կյուրեղն ուներ հակառակորդներ, ովքեր ցանկանում էին վտարել նրան երկրից: Բայց նա Աստծո ընտրյալն էր, և Աստված նրան բազմաթիվ շնորհներով օժտեց:

351թ. մայիսի 7-ն էր, երբ երկնքում ուժեղ լույս փայլեց, և մարդիկ ականատես եղան զարմանալի մի հրաշքի: Երկնքում երևաց փրկչական խաչի նշանը, որի պայծառությունից մթագնեց արեգակը: Այն շատ գեղեցիկ էր և շողարձակում էր ծիածանագույն շրջանակի մեջ: Լույսը տարածվելով անցավ Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը: Քրիստոնյաները շտապեցին դեպի Սիոնի Մայր եկեղեցի և այնտեղ երկար աղոթեցին ու իրենց գոհությունը հայտնեցին Աստծուն, որ արժանացան մեծագույն փառքի՝ Խաչյալ Քրիստոսի նշանը տեսնելուն: Այդ հրաշքին ականատես եղան ոչ միայն քրիստոնյաները, այլև Երուսաղեմի՝ տարբեր կրոններ դավանող մյուս բնակիչները: Հրեաներից շատերը հավատացին աստվածային նշանին և գալով քահանաների մոտ՝ խնդրեցին, որ իրենց մկրտեն, որպեսզի քրիստոնեական Եկեղեցու անդամ դառնան:

Տարիներ անց Երուսաղեմի երկնքում դարձյալ շողարձակեց տերունական խաչը և աստվածային հրաշքով դրոշմվեց անհավատների հագուստների վրա՝ ինչպես կրակից խանձված տեղեր: Շատերը ջանում էին սրբել խաչի նշանը հագուստի վրայից կամ լվանալ, բայց անօգուտ էր, որովհետև դա Աստծո հանդիմանության կնիքն էր:

Շատերը դարձի եկան, հավատացին Հիսուսին, սուրբ Կյուրեղի ձեռքով մկրտվեցին և դարձան քրիստոնյաներ:

Կյուրեղ հայրապետը նամակ գրեց Բյուզանդիայի Կոստանդին կայսրին, պատմեց Երուսաղեմում սուրբ Խաչի երևման մասին և խնդրեց կայսրին, որ ամուր մնա քրիստոնեական ճշմարիտ հավատի մեջ:

Սուրբ Կյուրեղի նամակը թարգմանվել է հայերեն: Ամեն տարի տոնի օրը այն ընթերցվում է առավոտյան ժամերգության ժամանակ:

Երևման խաչի տոնը մեր Եկեղեցին կատարում է Զատիկին հաջորդող հինգերորդ կիրակի օրը:



Համբարձում

(Մարկ. 16.19-20, Գործք 1.9-11)

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին և խոսեց Աստծո արքայության մասին: Մի օր էլ նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին: Եվ պատվիրեց, որ Երուսաղեմից չհեռանան, այլ սպասեն Հոր խոստումին: «Երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորություն պիտի առնեք և ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը»: Այդ ասելով՝ Հիսուսը ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց աշակերտներին և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Շուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Այդ պահին երևացին սպիտակազգեստ երկու մարդ և ասացին. «Ո՛վ գալիլեացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք բարձրացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը»:

Աշակերտները վերադարձան Երուսաղեմ, հավաքվեցին Վերնատանը, որտեղ միշտ աղոթում էին: Այստեղ էլ վիճակ գցեցին և Տիրոջ օգնությամբ 12-րդ առաքյալ ընտրեցին Մատաթիային: Նա ընտրվեց Հուդայի փոխարեն:

Ամեն տարի եկեղեցում Սուրբ Համբարձման տոնի օրը հիշատակվում է նաև 1441 թվականին Սսից հայոց հայրապետական Աթոռի՝ կաթողիկոսական նստավայրի փոխադրումը Սուրբ Էջմիածին:

Համբարձման տոնն ուղեկցվում է ժողովրդական հանդիսություններով: Այդ օրը աղջիկները յոթ աղբյուրից ջուր են բերում, յոթ ծաղկից փնջեր են կապում, պսակներ են հյուսում և վիճակ գցում, թե ում ինչ բախտ է սպասում:

Քանի որ Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց, այն միշտ տոնվում է հինգշաբթի օրը:

Հոգեգալուստ

(Գործք 2.1-13)

Հիսուսի համբարձումից հետո աշակերտները վերադարձան Երուսաղեմ, ինչպես նրանց պատվիրել էր Ուսուցիչը: Եվ ահա մի օր, երբ Վերնատանը հավաքված աղոթում էին, լսվեց մի ձայն, որն ուժեղ քամու սուլոց էր հիշեցնում: Նույն պահին երևացին բոցեր, որ նման էին հրեղեն լեզուների: Դրանք մեկ-մեկ իջան ներկաներից յուրաքանչյուրի վրա: Եվ հրաշք կատարվեց. ովքեր հավաքված էին Վերնատանը, երկնային շնորհներ ստացան, լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել տարբեր լեզուներով: Նրանք օրհնության և փառաբանության խոսքեր արտասանեցին իրենց ստացած շնորհների համար:

Այդ օրը նշվում էր աստվածային տասը պատվիրանները ստանալու տոնը, և Երուսաղեմը լեցուն էր տարբեր ազգերի պատկանող հյուրերով: Կային պարթևներ, մարեր, իլամացիներ, արաբներ. բոլորը, լսելով կատարված հրաշքի մասին, շտապեցին Վերնատուն: Նրանք ուշադրությամբ ունկնդրում էին տարբեր լեզուներով խոսող առաքյալներին և հասկանում էին նրանց, որովհետև առաքյալները խոսում էին իրենց համար հասկանալի լեզուներով: Մարդիկ զարմացած իրար հարցնում էին. «Չէ՞ որ սրանք ամենքն էլ գալիլեացիներ են, ուրեմն ինչպե՞ս են կարողանում խոսել մեր մայրենի լեզվով: Ինչպե՞ս են կարողանում իրենց չիմացած և չսովորած լեզուներով Աստծուն ուղղված այսպիսի գեղեցիկ փառաբանություններ անել»:

Առաքյալների՝ տարբեր լեզուներով խոսելը խորհրդանշում է, որ Ավետարանը քարոզվելու է աշխարհի բոլոր լեզուներով և բոլոր երկրներում:

Հոգեգալուստը կոչվում է նաև Պենտեկոստե, որ նշանակում է հիսուն օր: Հոգեգալուստը միշտ տոնվում է Սուրբ Զատկից հիսուն օր հետո:



Գրիգոր Լուսավորչի Նշխարների գյուտը

Սուրբ Գրիգոր Լուսավորչի շնորհիվ 301թ. Աստծո օրհնությունն իջնում է հայոց աշխարհի վրա: Հայ ժողովուրդը սուրբ մկրտությամբ խաչի դրոշմն ընդունում է իր ճակատին և ավետարանի լույսը՝ իր հոգու մեջ:

Հայ ժողովրդին մկրտելուց և լուսավորելուց, բավարար թվով եկեղեցիներ հիմնելուց և եկեղեցականներ ձեռնադրելուց հետո, հայոց առաջին հայրապետն առանձնանում է Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան Մանյա այրում, ուր վարում է ճգնավորի կյանք: Այս քարայրում էլ 332թ. ավանդում է հոգին: Հեռվում իրենց հոտն արածեցնող հովիվները ականատես են լինում, թե ինչպես է հրեշտակների դասը քաղցրալուր երգեցողությամբ քարայրից երկինք փոխադրում սրբի հոգին:

Հովիվները գտնում են սբ Գրիգորի մարմինը և ամփոփում նրան այդ նույն քարայրում: Տարիներ անց Գառնիկ անունով մի ճգնավորի հայտնի է դառնում սրբի նշխարների գտնվելու տեղը: Նա հանում է քարայրից սրբի անուշաբույր մարմինը, տեղափոխում Թորդան և ամփոփում այնտեղ:

Հետագայում այս նշխարները Թորդանից հանվել և սփռվել են ողջ քրիստոնյա աշխարհում: Սուրբ Հայրապետի աջ բազկի մասունքներն են ամփոփված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող ոսկեձույլ Աջում: Այն հայոց հայրապետական Աթոռի խորհրդանիշն ու զորությունն է: Սուրբ Աջով, Խաչափայտով և սուրբ Գեղարդով է օրհնվում Հայոց Եկեղեցու սրբալույս Մյուռոնը:



Հռիփսիմյանք և Գայանյանք

Ագաթանգեղոս պատմիչը գրում է, որ Հռոմում լեռների մեջ մեկուսացած մի վանք կար, ուր ապրում էին քրիստոնեական հավատով լի, սրբակենցաղ կույսեր՝ մայրապետ Գայանեի հետ միասին: Այդ վանքում էր մեծանում նաև գեղանի Հռիփսիմեն:

Դիոկղետիանոս կայսրը, ցանկանալով ամուսնանալ, պատվիրում է արքունական պատկերահանների նկարել բոլոր գեղեցիկ աղջիկներին, որ ինքը կարողանա ընտրություն կատարել: Պատկերահանները գալիս են նաև այս մենաստանը՝ նկարելու Հռիփսիմեին: Գրավված նրա գեղեցկությամբ՝ Դիոկղետիանոսը սիրահարվում է հմայիչ կույսին և ցանկանում կնության առնել նրան: Իմանալով այդ մասին՝ քրիստոնասեր Հռիփսիմեն մայրապետ Գայանեի և մյուս կույսերի հետ փախչում գալիս է Հայոց երկիր՝ Վաղարշապատ մայրաքաղաք: Շրջելով բնակավայրից բնակավայր՝ կույսերը Քրիստոսի սերն էին քարոզում մարդկանց, օգնում հիվանդներին ու կարիքավորներին: Դիոկղետիանոսից տեղեկանալով կույսերի Հայաստան գալու մասին՝ Տրդատ թագավորը հրամայում է գտնել և իր մոտ բերել Հռիփսիմեին: Առավոտյան՝ այգաբացին, զինվորները գտնում են կույսերին այն հնձանում, որտեղ ապրում էին, և գեղեցկատես Հռիփսիմեին տանում են թագավորական պալատ: Տրդատն այնպես է հմայվում աղջկա գեղեցկությամբ, որ ուզում է տիրանալ նրան: Բայց այդ ժամանակ հրաշք է կատարվում: Իր արիությամբ և ուժով հռչակված արքան, որ գերազանցել էր բոլորին, չի կարողանում հաղթել մի նազենի կույսի: Արքայի հրամանով Հռիփսիմեի մոտ են բերում Գայանեին, որպեսզի նա իր սանին հորդորի ենթարկվել արքայական հրամանին: Սակայն մայրապետը սրտապնդում է Հռիփսիմեին, պատվիրում չերկյուղել և չենթարկվել հեթանոս թագավորին:

Հաղթված և զայրացած արքան հրամայում է չարչարանքների ենթարկելով սպանել Հռիփսիմեին, Գայանեին և քրիստոնասեր մյուս 32 կույսերին: Արքունական զինվորների և հեթանոս ամբոխի ձեռքով բազում չարչարանքների ենթարկվելուց հետո նահատակվում են կույսերը՝ իրենց վարդագույն արյամբ ոռոգելով հայոց հողը: Հետագայում նրանց նշխարների վրա կառուցվում են Սուրբ Գայանե և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիները, որոնք Աստծո զորությամբ կանգուն են մինչև այսօր և նվիրական վայրեր են յուրաքանչյուր հայի համար:

Հայոց Եկեղեցում Հռիփսիմյանց հիշատակը նշվում է Սբ Էջմիածնի տոնին նախորդող երկուշաբթի օրը, իսկ Գայանյանց՝ Գայանեի և նրա հետ նահատակված երկու կույսերի հիշատակը՝ երեքշաբթի օրը:



Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը վիրապից

Հայոց Տրդատ արքան, տարված սբ Հռիփսիմեի գեղեցկությամբ, չկարողանալով տիրել նազենի կույսին, հրամայեց չարչարանքների ենթարկելով սպանել Հռիփսիմեին, Գայանեին և քրիստոսասեր մյուս 32 կույսերին:

Երբ հայոց հողում հեղվեց Հռիփսիմյանց անմեղ նահատակների արյունը, Աստծո պատիժը վրա հասավ Տրդատ արքային:

Ագաթանգեղոս պատմիչը գրում է, որ մի անգամ, երբ թագավորը շքախմբով որսի էր գնում, մոլեգնելով, ասես դիվահարված, ընկավ գետնին, զրկվեց մարդկային կերպարանքից, վարազաղեմ դարձավ: Արքունիքում և Վաղարշապատ քաղաքում էլի շատերը տարբեր ցավերով և հարվածներով պատուհասվեցին:

Այդ ժամանակ լուսեղեն մի տեսիլք երևաց թագավորի քրոջը՝ Խոսրովիդուխտին, և ասաց նրան. «Ձեզ հասած հարվածներից չեք բժշկվի, եթե Արտաշատի խոր վիրապից չհանեք այնտեղ նետված Գրիգորին: Նա կգա և կուսուցանի ձեզ՝ ինչպես բժշկվել ցավերից»: Երբ այդ մասին Խոսրովիդուխտը պատմեց նախարարներին, նրանք ընտրեցին Օտա անունով նախարարին և ուղարկեցին Արտաշատ, ուր 13 տարի առաջ վիրապն էր իջեցվել Տրդատի հրամանով մահվան դատապարտված Գրիգորը:

Երկար, հաստ պարաններ իրար կապելով՝ իջեցրին գուբը: Ապա բարձր ձայնով աղաղակեց նախարարը. «Գրիգո՛ր, ո՞ւր ես, դո՛ւրս արի, որովհետև քո Տեր Աստվածը հրամայեց հանել քեզ այդտեղից»: Եվ այդպես գբից հանեցին Գրիգորին, ով այդ տարիներին մնալով խավար գբում՝ ածխի պես սևացել էր: Եվ շատ զարմացան, երբ տեսան, որ ողջ է:

Հագուստներ տվեցին և տարան Վաղարշապատ: Քաղաքի մուտքի մոտ Գրիգորին ընդառաջ վազեց վարազաղեմ թագավորն իր նախարարների հետ և, ընկնելով սուրբի ոտքերը, սկսեց ներում հայցել նրանից: Գրիգորը մոտեցավ, բարձրացրեց թագավորին և ասաց. «Ես մարդ եմ և ձեզ նման մարմին ունեմ, դուք պետք է ճանաչեք ճշմարիտ Աստծուն, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, միայն նա կարող է ձեզ բժշկել»:

Հետևյալ օրը թագավորը, նախարարները և ողջ ավագանին, գալով Գրիգորի մոտ, խնդրեցին նրա բարեխոսությունը ամենակարող Աստծո մոտ: Գրիգորը սկսեց նրանց հետ խոսել մարդասեր Աստծո, Նրա փրկչական առաքելության մասին: Սբ Գրիգորի միջոցով Աստված խոսեց ծնկի իջած ժողովրդի հետ, և բացվեցին բոլորի աչքերը, հասկացան և սիրեցին միակ, ճշմարիտ Աստծուն: Գրիգորն աղոթքով ու պաղատանքով Աստծուց թագավորի համար բժշկություն խնդրեց, և բոլորի աչքերի առաջ արքայի դեմքը փոխվեց, վերստացավ իր մարդկային տեսքը:

Վաթսունվեց օր Գրիգոր Լուսավորիչը քարոզեց Քրիստոսի վարդապետությունը, և նրանից չհեռացան թագավորն ու մեծամեծները: Մեծ ուշադրությամբ լսեցին ավետաբեր խոսքը և վաթսունվեց օր պահք պահեցին:

Իսկ երբ ավարտվեց Լուսավորչի սահմանած պահքը, թագավորը հավաքեց գլխավոր նախարարներին, իշխաններին և հանդիսավոր պայմաններում սուրբ Գրիգորին ուղարկեց Կեսարիա՝ ձեռնադրվելու և հոգևորական աստիճան ստանալու: Հոգևորական ձեռնադրությամբ հայոց քահանայապետ դարձած սուրբ Գրիգորը, երբ հասավ Արածանիի ափերին, այստեղ նրան ընդառաջ ելավ Տրդատ թագավորը՝ արքայական ընտանիքի և հայոց ավագանու հետ: Այստեղ էլ Գրիգոր Լուսավորիչը մկրտեց բոլորին Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Դա տեղի ունեցավ Աստծո կամքով, սուրբ Գրիգորի ձեռքով, փրկչական 301թ.: Հայ ժողովրդին հեթանոսության խավարից քրիստոնեության լույսին դարձնելու համար սուրբ Գրիգորն անվանվեց Լուսավորիչ:

Լուսավորչի վիրապից ելնելու տոնը մեր Եկեղեցին կատարում է Սբ Էջմիածնի տոնին նախորդող շաբաթ օրը:



Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոն

Արդեն 1700 տարի է՝ հայ մարդու համար Սբ Էջմիածինը դարձել է հավատքի օրրան, հայոց հոգևոր կենտրոն և նվիրական ուխտատեղի:

301թ., երբ քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն, աստվածային հրամանով Վաղարշապատ քաղաքում հաստատվեց քահանայապետական Աթոռը, և 303թ. կառուցվեց Էջմիածնի Մայր տաճարը: Այս մասին իր «Հայոց պատմության» մեջ մեզ ավանդել է Ագաթանգեղոս պատմիչը.

«Մի գիշեր, երբ Գրիգոր Լուսավորիչը ջերմեռանդ աղոթում էր, աստվածային տեսիլք հայտնվեց նրան. բացվեց երկնքի հաստատությունը, և լույսը հորդելով վերևից մինչև երկիր հասավ: Լույսի մեջ հայտնվեց մարդկային մի կերպարանք, իսկ նրա հետևից՝ հրեշտակների լուսեղեն զորքը: Մարդկային այդ կերպարանքը առջևից էր ընթանում և ձեռքին ուներ ոսկյա մի մեծ մուրճ: Երկնքից վար խոյանալով մինչև երկրի հատակը՝ քաղաքի մեջտեղը, խփեց լայնատարած գետնին, և ահեղ թնդյուններ լսվեցին անդունդների սանդարամետի խորքերից: Եվ հանկարծ քաղաքի մեջ՝ արքունի ապարանքի մոտ, ոսկե խարիսխ բարձրացավ, նրա վրա՝ հրեղեն այուն, վրան՝ ամպե խոյակ՝ լուսեղեն խաչով»:

Աստված խոսեց Սբ Գրիգորի հետ և ասաց. «Խաչը, որ քեզ ցույց տվեցի, մեծ քահանայապետությունն է: Այդ տեղում թող կաթողիկե տաճարը լինի և քահանայապետության աթոռը»:

Ինչպես պատվիրեց Տերը, այդպես էլ արեցին: Ամբողջ ժողովուրդը հայոց Տրդատ թագավորի ու արքայական ընտանիքի հետ միասին կառուցեց Մայր տաճարը՝ Միածնի իջման վայրում: Դա կատարվեց 303 թվականին: Տաճարը կոչվեց Սբ Աստվածածնի անունով, հետագայում վերանվանվեց Սբ Էջմիածին, և Աստված միշտ հաստատուն պահեց իր իսկ հիմնած միածնաէջ Մայր տաճարը:

Էջմիածնի տոնին երգվում է Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի շարականը, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի փառաբանությունն է:

Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա.
Ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային.
Եկայք շինեսցուք սուրբ զիտորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Սբ Էջմիածնի տոնը կատարվում է Հոգեգալստյանը հաջորդող երկրորդ կիրակի օրը, այսինքն՝ Հոգեգալստյան տոնից 14 օր անց:



Վարդավառ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի պայծառակերպումը

(Մատթ. 17.1-13, Մարկ. 9.2-12, Ղուկ. 9.28-36)

Ամեն տարի շքեղ հանդիսությամբ, տոնական շարականներով ու աղոթքներով մենք տոնում ենք Պայծառակերպության տոնը, որ ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ:

Այդ օրը Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց ինչպես արեգակ, և զգեստները շողարձակեցին, ինչպես լույսը: Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Պետրոսը դիմեց Հիսուսին և ասաց. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ լինենք և երեք տաղավար շինենք. մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի և մեկն էլ Եղիայի համար»: Հանկարծ մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, դրա՛ն լսեք»: Աշակերտները սաստիկ վախեցան և երեսնիվայր ընկան: Հիսուսը, մոտենալով նրանց, հուսադրեց. «Ոտքի՛ ելեք և մի՛ վախեցեք»: Երբ առաքյալները գլուխները բարձրացրին, իրենց Ուսուցչից բացի ոչ մեկին չտեսան:

Հիսուսը պատվիրեց աշակերտներին տեսածի մասին ոչինչ չպատմել, մինչև Մարդու Որդու՝ մեռելներից հարություն առնելը: Եվ առաքյալները հասկացան, որ իրենց մեծ շնորհ տրվեց՝ տեսնելու Հիսուսի Աստվածությունը:

Ավանդությունը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որի վրա էլ հետագայում կառուցվել է եկեղեցի՝ ի հիշատակ Տիրոջ պայծառակերպության:

Վարդավառի տոնը մեր Եկեղեցում նշվում է Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը:

Վարդավառի օրը՝ Պատարագից հետո, տղաներն ու աղջիկները ուրախ խաղեր են կազմակերպում ու ջուր ցողում միմյանց վրա:



Սուրբ Աստվածածնի վերափոխումը

Հիսուսի համբարձումից հետո Մարիամ Աստվածածինն ապրում էր Հովհաննես առաքյալի խնամքի ներքո, ինչպես որ Տերը պատվիրեց խաչափայտի վրա: Տիրամայրն իր օրերն անցկացնում էր ջերմեռանդ աղոթքով և վայելում էր աշակերտների ուշադրությունն ու հոգատարությունը:

Մի օր Գաբրիել հրեշտակապետը հայտնվեց Կույսին և ասաց, որ երեք օր հետո երկինք պիտի փոխադրվի: Մարիամն անչափ ուրախացավ և բարձրացավ Ձիթենյաց լեռը՝ աղոթելու: Վերադառնալով՝ կանչեց առաքյալներին ու ազգականներին և հայտնեց հրեշտակապետից լսածը: Հովհաննես առաքյալը պատարագ մատուցեց, որպեսզի Կույսը վերջին անգամ Հաղորդություն ստանա:

Բոլոր առաքյալները տխրել էին Աստվածամոր սպասվող վախճանի համար: Այդ ժամանակ Հովհաննես առաքյալը, մի տախտակ տալով Աստվածամորը, ասաց. «Թող մեզ քո պատկերը, որ բաժանումից հետո պատկերովդ մխիթարվենք»: Սրբուհին վերցրեց տախտակը, դրեց երեսին և թրջեց այն իր արցունքներով: Երբ վերադարձրեց, առաքյալները տեսան, որ տախտակի վրա դրոշմվել էր սուրբ Կույսի դիմապատկերը:

Առաքյալները Տիրամոր մարմինն ամփոփեցին Գեթսեմանի այգում: Երեք օր շարունակ գերեզմանատնից լսվում էր հրեշտակների փառաբանական օրհներգությունը: Չորրորդ օրը՝ առավոտյան, հրեշտակների բանակը, Հիսուսի գլխավորությամբ, իջավ երկնային բարձունքից և սրբուհու մարմինը երկինք փոխադրեց:

Բարթողիմեոս առաքյալը ներկա չէր վերջին հրաժեշտին: Երբ վերադարձավ Երուսաղեմ, դառնագին ողբաց՝ լսելով Կույսի վախճանի մասին: Նրա թախանձանքին անսալով՝ առաքյալները որոշեցին բացել գերեզմանը՝ Աստվածամոր սուրբ դեմքը վերջին անգամ տեսնելու համար: Բայց, ի զարմանս բոլորի, գերեզմանը դատարկ էր: Այդ ժամանակ երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր. «Մի՛ վախեցեք, Տիրամոր մարմինը Որդին երկինք բարձրացրեց»:

Սուրբ Կույսի պատկերով տախտակը առաքյալները հանձնեցին Բարթողիմեոսին, որպեսզի մխիթարվի և տանի իր հետ այն երկիրը, ուր պիտի գնա քարոզելու:

Ըստ ավանդության՝ Բարթողիմեոսը եկավ Հայաստան և սուրբ Մարիամի պատկերով բազմաթիվ հիվանդներ բժշկեց: Նա զետեղեց նկարը Անձևացյաց գավառի Դարբնոց քար կոչվող վայրում, ուր հետագայում կառուցվեց Սբ Աստվածածին եկեղեցին:

Ահա այս պատճառով հայ եկեղեցական արվեստում Բարթողիմեոս առաքյալը պատկերվում է Տիրամոր պատկերը ձեռքին:

Հայոց բոլոր եկեղեցիների խորանները զարդարում է «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերը, որում Տիրամայրը պատկերվում է Մանուկ Հիսուսը գրկին:

Սբ Աստվածածնի վերափոխման տոնի օրը՝ ս. Պատարագից հետո, կատարվում է խաղողօրհնեքի արարողություն: Այդ օրը եկեղեցում խնդրվում է Աստծո օրհնությունը եկեղեցուն նվեր բերված խաղողի ողկույզներին և ճաշակողներին, որպեսզի նրանք արժանի լինեն մեղքերի թողության և դառնան առողջ՝ մտքով ու հոգով: Խնդրվում է, որ Տերն օրհնի պտուղը բերողներին, օրհնի որթատունկերը, այգիները, որպեսզի լինեն պարարտ ու բերրի, և հավատացյալներն էլ ճաշակելով՝ արժանի դառնան երկնքի արքայությանը:

Վերափոխման տոնը մեր Եկեղեցին նշում է օգոստոսի 15-ի մոտակա, այսինքն՝ օգոստոսի 12-ից 18-ը հանդիպող կիրակի օրը:



Խաչվերաց

610թ. պարսից Խոսրով թագավորը հարձակվեց Երուսաղեմ քաղաքի վրա և գրավեց այն: Պարսից զորքը ավերակների վերածեց քաղաքը, ժողովրդի մի մասին սրի քաշեց, մի մասին էլ գերի տարավ:

Զինվորներն ավերեցին տերունական սրբավայրերը, թալանեցին Սբ Հարություն տաճարը և իրենց հետ տարան այն Խաչը, որի վրա խաչվել էր Հիսուս Քրիստոսը: Քաղաքը թողնելով ողբի ու սգի մեջ՝ ասպատակողները հեռացան:

Սակայն հունաց Հերակլ կայսրը, որ աստվածապաշտ էր ու քրիստոսասեր, չհանդուրժեց Խաչափայտի գերեվարումը: Սուրբ Խաչը վերադարձնելու համար նա պատերազմ սկսեց Խոսրով արքայի դեմ: Հերակլի զորքում կռվում էր նաև հայկական զորագունդը: Հունաց կայսրը ցանկանում էր պատժել պարսից արքային և ծնկաչոք աղոթում էր Աստծուն, որ իրեն հաղթություն պարգևի սրբազան այդ պատերազմում: Մի օր էլ տեսիլքի ձևով հայտնվեց Աստված և ասաց կայսրին. «Դու կհաղթես այս պատերազմում, որովհետև քո գործն արդար է»: Այդպես էլ եղավ. Հերակլը հաղթեց և ազատագրեց Տերունական խաչը: Հաղթական զորքը, ժողովրդի մեծ բազմության հետ միասին, ցնծությամբ ու փառաբանությամբ Պարսկաստանից, Հայաստանի միջով անցնելով, Խաչը բերեց Երուսաղեմ և կրկին զետեղեց Սուրբ Հարություն տաճարում: Ժողովուրդը կարծես վերապրում էր Քրիստոսի հարության ուրախությունը:

Խաչվերացի տոնը մեծ տոնախմբության օր է: Եկեղեցում խաչը զարդարում են գույնզգույն, հոտավետ ծաղիկներով և լայնատերև ռեհանով և դուրս հանելով՝ պտտեցնում եկեղեցու շուրջը, որն արձագանքն է խաչափայտի՝ գերությունից հետ դարձնելիս Հայկական լեռնաշխարհի ծաղկավետ վայրերով հետ՝ դեպի Երուսաղեմ տանելու:

Խաչափայտի գերեդարձը կատարվեց 628թ. սեպտեմբերի 11-ին: Քանի որ մեր Եկեղեցին Տերունական, Խաչի և Եկեղեցու տոները կատարում է կիրակի օրերին, ուստի Խաչվերացի տոնը նշվում է այդ օրվան մոտ կիրակի օրը, որն ընկնում է սեպտեմբերի 11-ից 17-ի միջև:



Սուրբ Գևորգ

Սբ Գևորգը քաջ և հմուտ զորավար էր: Նա սիրում էր Աստծուն և բարեխղճորեն կատարում էր Տիրոջ բոլոր պատվիրանները:

Դիոկղետիանոս հեթանոս կայսրը, երբ հրովարտակ արձակեց, որի մեջ գրված էր. «Չարաչար մահով կսպանվեն բոլոր նրանք, ովքեր չեն պաշտում և զոհեր չեն մատուցում կուռքերին», թագավորական այս հրամանը կախեցին հրապարակներում՝ ի գիտություն քրիստոնյաների: Սակայն Գևորգ զորավարը, որ քաջ էր և աստվածապաշտ, առանց երկյուղելու պատռեց արքունական հրովարտակը և քաջալերելով մյուս քրիստոնյաներին՝ ասաց. «Մի՛ վախեցեք, որովհետև Աստված երբեք մենակ չի թողնում իրեն հավատացողներին»:

Քաջ զորավարը գնաց թագավորական պալատ, կանգնեց Դիոկղետիանոսի առաջ և համարձակ ասաց. «Հրաժարվե՛ք ձեր պիղծ կուռքերին պաշտելուց և ճանաչե՛ք ճշմարիտ Աստծուն, Նրան, ով Արարիչն է երկնքի ու երկրի»:

Մոլեգնած թագավորը հրամայեց հրապարակում կախել և տեգով խոցել Գևորգ զորավարին: Բայց երբ զինվորները մոտեցան կատարելու թագավորի հրամանը, տեգը ծալվեց և չվնասեց քաջ զորավարին: Ովքեր ականատես եղան այդ հրաշքին, հավատացին Քրիստոսի զորությանը:

Զայրացած թագավորը հրամայեց բանտ նետել զորավարին և ենթարկել մահացու տանջանքների: Այդ պահին երկինքը որոտաց, և մի ձայն ասաց. «Քաջալերվի՛ր, Գևո՛րգ, որովհետև քո Փրկիչը պետք է զորացնի քեզ»: Այս ձայնի հետ Աստծո հրեշտակը իջավ երկնքից և ազատեց սուրբին տանջանքներից: Այնտեղ եղած մարդիկ ևս, տեսնելով հրեշտակին, հավատացին Քրիստոսի զորությանը:

Թագավորը հրամայեց սպանել սուրբ Գևորգին և նրանց, ովքեր հրաժարվում էին կուռքերի պաշտամունքից: Զինվորները ձերբակալեցին բոլորին և տարան քաղաքից դուրս: Սբ Գևորգն աղոթեց, որ հեթանոսները հավատքի գան և ճանաչեն ճշմարիտ Աստծուն, ապա հպարտ ու անվախ ասաց. «Կատարե՛ք ձեր թագավորի հրամանը»:

Սբ Գևորգի որոշ մասունքներ տեղափոխվել են Հայաստան, դրանց վրա կառուցվել են սրբի անունը կրող եկեղեցիներ, որոնք ուխտատեղիներ են դարձել հավատացյալների համար: Այս եկեղեցիներից հռչակված է հատկապես Մուղնիի Սուրբ Գևորգը, ուր սուրբի տոնին մեծ ուխտագնացություն է լինում:

Սբ Գևորգը, ինչպես նաև այլ սուրբ զինվորներ, պատկերվում են ձիու վրա նստած և տեգով մի մեծ վիշապ սպանելիս: Այս վիշապը խորհրդանշում է սատանային և չար ուժերը:



Վարագա Սուրբ Խաչի տոն

Վասպուրական աշխարհում է գտնվում Վարագ գեղեցիկ լեռը:

Երբ բյուզանդական կայսրը սկսեց հետապնդել Հռիփսիմյանց կույսերին, հալածանքներից ազատվելու համար նրանք Հռոմից փախան Հայաստան և մինչ Վաղարշապատ գնալը, առժամանակ մնացին Վարագ լեռան լանջերին: Սբ Հռիփսիմեն իր պարանոցին կրում էր Քրիստոսի խաչափայտից մի մասունք:

Գալով Հայաստան՝ կույսերը սկսեցին քրիստոնեություն քարոզել ժողովրդին: Սակայն այստեղ էլ նրանց դեմ սկսվեցին հալածանքներ: Հռիփսիմեն, վախենալով, որ անհավատ բարբարոսները կխլեն իրենից խաչափայտի մասունքը, թաքցրեց այն Վարագ լեռան քարայրներից մեկում: Մի քանի կույսեր մի քահանայի հետ որպես սպասավոր մնացին այդ քարայրում, իսկ Հռիփսիմեն, մյուս սրբուհիների հետ բռնեց Վաղարշապատ տանող ճանապարհը:

Անցավ մի քանի դար: Հայտնի չէր խաչափայտի մասունքի գտնվելու վայրը, և Վարագ լեռան վրա ճգնող Թոդիկ վանականը և նրա աշակերտ Հովելը օր ու գիշեր ծնկաչոք աղոթում էին և խնդրում Տիրոջը, որ արժանացնի գտնելու և համբուրելու սուրբ մասունքը: Եվ Աստված լսեց նրանց խնդրանքը: Երկնքից մի ձայն լսվեց, հետո Վարագա լեռան վրա երևաց լուսափայլ խաչ, և 12 լուսեղեն այուներ իջան երկնքում շողացող խաչից: Լույսերը երկար ժամանակ շողացին լեռան վրա, հետո երկնքից վայր ծավալվելով, իջան եկեղեցու սբ Սեղանին, որտեղ էլ գտնվում էր սուրբ մասունքը: Վանահայրն ու իր աշակերտը լույսի հետևից մտան եկեղեցի, ծնկի իջան սբ. Սեղանի առջև և երկրպագեցին Աստծուն: Մարդիկ հեռվից տեսան լույսը և շտապեցին եկեղեցի: Եկավ նաև Ներսես կաթողիկոսը՝ հոգևոր դասի հետ: Այդպես սահմանվեց Վարագա խաչի տոնը:

Մեծ տոնախմբություն կազմակերպեցին և լույսի երևման տեղում Սբ Նշան եկեղեցին կառուցեցին: Իսկ այն եկեղեցին, որտեղ հայտնաբերվել էր սուրբ մասունքը, մեծացրին և ավելի փառավոր դարձրին:

Վարագա Խաչի տոնը կատարվում է Խաչվերացին հաջորդող երկրորդ կիրակի օրը:



Սուրբ Թարգմանչաց տոն

387թ. երկու հզոր պետություններ՝ Պարսկաստանը և Բյուզանդիան, Հայաստանը բաժանել էին երկու մասի: Նրանք ցանկանում էին վերացնել հայկական պետականությունը, կրոնափոխ անել մարդկանց: Դրված էր հայերի լինել-չլինելու հարցը: Միայն մեկ բան կարող էր հայ ժողովրդին փրկել կործանումից: Հարկավոր էր արագ ստեղծել հայոց լեզվի նշանագրերը, որպեսզի Սուրբ Գիրքը քարոզվեր հայերեն, իսկ հայ մանուկներն իրենց պատմությունը սովորեին մայրենի լեզվով:

Ստեղծված տագնապալի վիճակը խորապես մտահոգում էր Սահակ Պարթև հայրապետին և հայոց Վռամշապուհ արքային: Նրանք չգիտեին, թե ում կարող են վստահել հայերեն նշանագրերի ստեղծումը:

Այդ ժամանակ Տարոն գավառի Հացեկաց գյուղում ապրում էր Մեսրոպ անունով մի իմաստուն մարդ: Նա շատ խելացի էր, և շուտով կանչվեց թագավորական պալատ՝ արքունի գրագրությունը կատարելու: Սակայն Աստված նրան այլ առաքելության համար էր ընտրել, և Մեսրոպը, թողնելով աշխարհիկ կյանքը, ձեռնադրվեց հոգևորական: Նա ճգնում էր քարանձավներում, սնվում էր միայն խոտաբույսերով և սիրով դիմանում էր բոլոր տեսակի դժվարություններին, քաղցին, ծարավին, որովհետև պատրաստվում էր շատ մեծ և կարևոր գործունեության: Նրան ոչ մի վայրկյան հանգիստ չէր տալիս ժողովրդի վիճակը: Մեսրոպ վարդապետը հասկանում էր, որ միայն հայերեն նշանագրերը կարող են փրկության դուռ բացել հայերի համար: Եվ մի օր էլ, հերթական անքուն գիշերից հետո, եկավ Սահակ Պարթևի մոտ և հայտնեց իր մտատանջությունը: Բարեպաշտ Վռամշապուհ արքան շատ ուրախացավ, երբ իմացավ, որ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ցանկանում են ձեռնամուխ լինել հայոց նշանագրերի ստեղծմանը: Նա քաջալերեց և խրախուսեց իմաստուն հոգևորականներին:

Մեծ ուսուցիչը հավաքեց մի խումբ աշակերտների և մեկնեց Միջագետք: Այնտեղ խորհրդակցեց հույն և ասորի բազմաթիվ եպիսկոպոսների հետ՝ հույսով, որ կօգնեն իրեն: Սակայն մարդկանցից հույսը կտրելով՝ Մաշտոցն իրեն հանձնեց Աստծուն: Եվ ամենակարող Աստված լսեց նրա աղոթքը:

Մի օր էլ, երբ աղոթում էր և աղերսագին խնդրում Աստծուն օգնել իրեն, ոչ արթուն և ոչ էլ երազի մեջ՝ նրա աչքին երևաց մի ձեռք, որը քարերի վրա ինչ-որ տառերի հետքեր թողեց, ինչպես ձյան վրա: Մաշտոցն ուրախացած ելավ տեղից, վերցրեց մագաղաթը և վրան դրոշմեց աստվածատուր գրերը: Եվ կարդաց՝ այբ, բեն, գիմ... Դա իսկական հրաշք էր. նշանագրերը համապատասխանում էին հայերենի բոլոր հնչյուններին: Մաշտոցը դասավորեց և վերջնական տեսքի բերեց տառերը: Հետո կանչեց իր աշակերտներին, և երբ նրանք հավաքվեցին, առաջին գործը, որ արեցին, Սողոմոնի առակների թարգմանությունն էր: Շուտով հունարենից թարգմանվեց և աստվածատուր գրերով գրվեց առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Դա 406 թվականն էր:

Մեծ ցնծություն տիրեց Հայոց աշխարհում: Ժողովուրդը Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթևի և նախարարների բազմության հետ դուրս եկավ Վաղարշապատ քաղաքից, շարժվեց դեպի Արաքս գետի ափը՝ ցնծության երգերով դիմավորելու Մաշտոցին և նրա աշակերտներին:

Բոլորի սրտերն ուրախությամբ լցվեցին, երբ Մեսրոպը ցույց տվեց նորաստեղծ հայկական տառերով թարգմանված տողերը: Դա իսկական ազգային տոն էր: Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը ամենուր հիմնեցին հայալեզու դպրոցներ և սկսեցին կրթել հայ մանուկներին: Հայաստան աշխարհը ծաղկեց դրախտի նման:



Հետո եպիսկոպոսների և վարդապետների մի խմբի հետ Մաշտոցն ու Սահակ Պարթևը սկսեցին թարգմանել Աստվածաշունչը: Նրանք աշխատում էին գիշերուզօր: Եվ շատ շուտով ավարտվեց թարգմանությունը:

Բազմաթիվ բարեկարգություններ կատարվեցին սբ Սահակի և սբ Մեսրոպի ձեռքով: Նրանք կոչվեցին մեր ազգի մեծ Ուսուցիչներ, ովքեր իրենց աշակերտների՝ Եզնիկի, Կորյունի, Հովսեփի, Ղևոնդի և այլոց հետ հիմքը դրեցին հայոց լեզվով գրականության՝ թե՛ ինքնուրույն գործեր ստեղծելով, թե՛ կատարելով բազմաթիվ թարգմանություններ հունարենից և ասորերենից՝ առաջին հերթին թարգմանելով Սուրբ Գիրքը, ինչ պատճառով և կոչվեցին Թարգմանիչներ:

Խաչի գյուտի (գտնվելու) տոնը

Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինեն, շատ բարեպաշտ կին էր, և Աստված նրան մեծ պատվի արժանացրեց: Մի օր տեսիլքի ձևով Աստված հայտնվեց նրան և ասաց. «Գնա, գտիր Քրիստոսի խաչափայտը և այդ վայրում տաճար կառուցիր»:

Այդ օրերին Երուսաղեմում ապրում էր Հուդա անունով մի հրեա: Նրա օգնությամբ կայսրուհին բարձրացավ Գողգոթա, ուր խաչվել էր Աստվածորդին: Գողգոթան այդ ժամանակ մոռացված մի վայր էր և աղբանոցի էր վերածվել:

Աստծո շնորհով թագուհին գտնում է երեք խաչափայտերը և անգամ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը, որը պոկվել էր խաչից: Երուսաղեմի Մակարիոս պատրիարքն Աստծուց նշան էր խնդրում իմանալու, թե որն է Փրկչի խաչափայտը: Նշանը չի ուշանում: Երբ խաչերից մեկը մոտեցնում են մի հիվանդ կնոջ, նա առողջանում է: Այնուհետև մի մահացած պատանի է կենդանանում նույն խաչի օգնությամբ: Այսպիսով իմանում են, թե որն է Տերունական խաչը: Այս ամենը տեսնելով՝ շատ հրեաներ են դարձի գալիս, ինչպես նաև տեղը ցույց տվող Հուդան, ով հետագայում Տիրոջ անվան համար նահատակվում է՝ արժանանալով մարտիրոսական պսակի: Հեղինե թագուհին Գողգոթայի վրա կառուցում է Սուրբ Հարություն տաճարը և խաչն այնտեղ բարձրացնում՝ ի ցույց ժողովրդի:

Ահա այսպես, աստվածային նախախնամությամբ ու հրաշքով, Գողգոթայի աղբանոցից գտնվում է Հիսուս Քրիստոսի խաչափայտը:

Երուսաղեմի ժողովուրդը, լսելով կատարվածի մասին, շտապեց Գողգոթա՝ տեսնելու կենդանարար խաչափայտը: Այդ հրաշքին ականատես անհավատներից շատերը քրիստոնյա դարձան: Թագուհու ջանքերով գտնվեց նաև Քրիստոսի գերեզմանի այրը: Այնտեղ կառուցեցին Սբ Հարություն տաճարը, որի մեջ էլ զետեղեցին խաչափայտը՝ ի ցույց ժողովրդի:

Այս դեպքը հիշատակելու համար մեր Եկեղեցին ամեն տարի նշում է Քրիստոսի խաչափայտի գտնվելու տոնը, որ կոչվում է տոն Խաչի գյուտի:



Սուրբ Թադեոս և Սուրբ Բարթողիմեոս առաքյալների տոն

Քրիստոսն իր համբարձումից առաջ պատվիրեց իր առաքյալներին գնալ և քարոզել Աստծո խոսքը աշխարհով մեկ: Սուրբ Հոգու շնորհներով օժտված՝ Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները եկան Հայաստան՝ քրիստոնեություն քարոզելու և Աստծո պատվիրանները մարդկանց սովորեցնելու: Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները հայ ժողովրդի առաջին լուսավորիչներն են: Մինչև քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակվելը, նրանց շնորհիվ է մեր երկրում տարածվել քրիստոնեությունը: Հիսուսի առաքյալների անունով է Հայոց Եկեղեցին կոչվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Թադեոս առաքյալը շրջում էր հայկական բնակավայրերով, Քրիստոսի զորությամբ հրաշքներ գործում, մխիթարում և բուժում մարդկանց: Առաքյալի կատարած հրաշքների լուրը տարածվեց ողջ երկրով, հասավ թագավորական պալատ, այդ մասին իմացավ նաև գեղանի արքայադուստրը՝ Սանդուխտը: Նա լսեց առաքյալի քարոզները, հավատաց Քրիստոսին և մկրտվեց առաքյալի ձեռքով: Մկրտության պահին զարմանահրաշ նշաններ երևացին. երկնքից լույս իջավ սուրբ կույսի վրա, և լսվեց հրեշտակների զվարթ երգեցողությունը. «Զվարճացի՛ր և ուրախացի՛ր, դո՛ւստր գովելի, բարի հա՛րս երկնավոր Փեսայի»,- երգում էին հրեշտակները: Ովքեր տեսան այս հրաշքը, հավատացին Քրիստոսին և փառավորեցին Աստծուն:

Սակայն անհավատ Սանատրուկ թագավորի հրամանով սպանվեց նրա դուստրը՝ Սադուխտը, ով ոչ մի կերպ չհամաձայնեց հրաժարվել ճշմարիտ Աստծուց՝ Քրիստոսից, և վերադառնալ հեթանոսության: Իսկ երեք օր անց Հիսուսի առաքյալին՝ Թադեոսին տարան քաղաքից դուրս և մի բարձրավանդակի վրա, տարբեր չարչարանքների ենթարկելով, նահատակեցին:

Սուրբ Թադեոսի նահատակության պահին ուժեղ երկրաշարժ եղավ, ճեղքվեց ժայռը, և սուրբի մարմինն իր մեջ առավ:

Այդ ժամանակ արդեն Հայաստանում էր գտնվում նաև Քրիստոսի առաքյալներից ևս մեկը՝ Բարթողիմեոսը: Նրա շնորհիվ քրիստոնեություն ընդունեց նաև Սանատրուկի քույրը: Զայրացավ թագավորը և հրամայեց Բարթողիմեոսին ևս տանջանքների ենթարկելով սպանել:

Այն նույն ժամին, երբ Բարթողիմեոս առաքյալը հոգին էր ավանդում, հայտնվեց սուրբ Թադեոսը, և նրանք երկուսով երկինք բարձրացան:

Քրիստոսի հավատքն առաքյալների շնորհիվ սփռվեց Հայաստան աշխարհում: Մեր Եկեղեցին ամեն տարի նշում է նրանց հիշատակը մեծ հանդիսությամբ: Թադեոս առաքյալի ձեռքով Հայաստան է բերվել սբ Գեղարդը (այսինքն՝ նիզակը), որով խաչելության ժամանակ հռոմեացի զինվորը խոցեց Հիսուսի կողը, ինչ պատճառով էլ Հայոց Եկեղեցում Թադեոս առաքյալը միշտ պատկերվում է սբ Գեղարդը ձեռքին: Այդ սրբությունը մինչ օրս պահվում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:



Սուրբ Ստեփանոս

(Գործք 6.8-15, 7.1-59, 8.1-2)

Ստեփանոսը Հիսուսի 72 աշակերտներից էր: Աստվածային շնորհներով և զորությամբ լցված՝ նա ամեն տեղ քարոզում էր Աստծո խոսքը և բազմաթիվ հրաշքներ գործում: Հրեաները նախանձով և չարությամբ լցվեցին Ստեփանոսի հանդեպ և մի օր էլ, գալով ատյան, սկսեցին զրպարտել նրան՝ ասելով. «Այդ մարդը չի դադարում հայհոյել Մովսեսին և Աստծուն»: Բոլոր նրանք, ովքեր նստած էին ատյանում, նայեցին Ստեփանոսին և տեսան հրեշտակի դեմքով մի պատանու, որի մեջ դույզն-ինչ չարություն չկար: Եվ պատասխանեց Ստեփանոսը նրանց. «Ձեր հայրերը հալածեցին և սպանեցին մարգարեներին, ովքեր նախօրոք պատմեցին Աստծո Որդու գալստյան մասին, որի մատնիչներն ու սպանողները եղաք դուք»: Սա լսելով՝ հավաքվածները, որ սրերով զինված՝ եկել էին սպանելու Ստեփանոսին, պահանջեցին նրա մահը: Ստեփանոսը, Սուրբ Հոգով լցված, հայացքը երկինք բարձրացրեց և քանի որ հեզ ու խոնարհ էր, նրա առջև բացվեց աստվածային փառքը: Հիացած այդ տեսարանից՝ նա ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդուն, որ կանգնած է Աստծո աջ կողմը»:

Այս խոսքերից էլ ավելի զայրացած՝ նրանք տարան Ստեփանոսին քաղաքից դուրս և քարկոծելով սպանեցին: Մեռնելուց առաջ Ստեփանոսը ծնկի իջավ և աղոթքով խնդրեց Աստծուն, որ ների և մեղք չհամարի իրեն նահատակողների արարքը:

Ստեփանոս սարկավագն առաջինն էր, որ նահատակվեց հանուն քրիստոնեական հավատքի, ինչ պատճառով և անվանվում է Նախավկա, այսինքն՝ առաջին վկան՝ նահատակը:

Նա նաև քրիստոնեական Եկեղեցու առաջին 7 սարկավագներից մեկն էր, ուստի նրա տոնին մեր Եկեղեցում ավանդաբար կատարվում է սարկավագական ձեռնադրություն:



Հայաստանյայց Ս. Եկեղեցու որոշ տոների ցուցակ՝

	2006	2007	2008
Սուրբ Ծնունդ	Հուն. 6	Հուն. 6	Հուն. 6
Անվանակոչություն	Հուն.13	Հուն.13	Հուն.13
Սուրբ Սարգիս	Փետ.11	Փետ. 3	Հուն.21
Տյառնընդառաջ	Փետ.14	Փետ.14	Փետ.14
Սուրբ Վարդանանք	Փետ.23	Փետ.15	Հուն.31
Գրիգորի Լուսավորչի մուտքը	Ապր.1	Մրտ.24	Մրտ.8
Բուն բարեկենդան	Փետ.26	Փետ.18	Փետ. 3
Բ կիրակի՝ Արտաքսման	Մրտ. 5	Փետ.25	Փետ.10
Գ կիրակի՝ Անառակի	Մրտ.12	Մրտ. 4	Փետ.17
Դ կիրակի՝ Տնտեսի	Մրտ.19	Մրտ.11	Փետ.24
Ե կիրակի՝ Դատաւորի	Մրտ.26	Մրտ.18	Մրտ. 2
Զ կիրակի՝ Գալստյան	Ապր.2	Մրտ.25	Մրտ.9
Ծաղկազարդ	Ապր.9	Ապր.1	Մրտ.16
Ավագ երկուշաբթի	Ապր.10	Ապր.2	Մրտ.17
Ավագ երեքշաբթի	Ապր.11	Ապր.3	Մրտ.18
Ավագ չորեքշաբթի	Ապր.12	Ապր.4	Մրտ.19
Ավագ հինգշաբթի	Ապր.13	Ապր.5	Մրտ.20
Ավագ ուրբաթ	Ապր.14	Ապր.6	Մրտ.21

Փրկչական 2006-2015 թթ. տարիների համար

2009	2010	2011	2012	2013	2014	2015
Հուն. 6	Հուն. 6	Հուն. 6	Հուն.6	Հուն. 6	Հուն. 6	Հուն. 6
Հուն.13	Հուն.13	Հուն.13	Հուն.13	Հուն.13	Հուն.13	Հուն.13
Փետ. 7	Հուն.30	Փետ.19	Փետ.4	Հուն.26	Փետ.15	Հուն.31
Փետ.14	Փետ.14	Փետ.14	Փետ.14	Փետ.14	Փետ.14	Փետ.14
Փետ.19	Փետ.11	Մրտ. 3	Փետ.16	Փետ. 7	Փետ.27	Փետ.12
Մրտ.28	Մրտ.20	Ապր. 9	Մրտ.24	Մրտ.16	Ապր. 5	Մրտ.21
Փետ.22	Փետ.14	Մրտ. 6	Փետ.19	Փետ.10	Մրտ. 2	Փետ.15
Մրտ. 1	Փետ.21	Մրտ.13	Փետ.26	Փետ.17	Մրտ. 9	Փետ.22
Մրտ. 8	Փետ.28	Մրտ.20	Մրտ. 4	Փետ.24	Մրտ.16	Մրտ. 1
Մրտ.15	Մրտ.7	Մրտ.27	Մրտ.11	Մրտ. 3	Մրտ.23	Մրտ. 8
Մրտ.22	Մրտ.14	Ապր. 3	Մրտ.18	Մրտ.10	Մրտ.30	Մրտ.15
Մրտ.29	Մրտ.21	Ապր.10	Մրտ.25	Մրտ.17	Ապր.6	Մրտ.22
Ապր.5	Մրտ.28	Ապր.17	Ապր.1	Մրտ.24	Ապր.13	Մրտ.29
Ապր.6	Մրտ.29	Ապր.18	Ապր.2	Մրտ.25	Ապր.14	Մրտ.30
Ապր.7	Մրտ.30	Ապր.19	Ապր.3	Մրտ.26	Ապր.15	Մրտ.31
Ապր.8	Մրտ.31	Ապր.20	Ապր.4	Մրտ.27	Ապր.16	Ապր.1
Ապր.9	Ապր.1	Ապր.21	Ապր.5	Ապր.28	Ապր.17	Ապր.2
Ապր.10	Ապր.2	Ապր.22	Ապր.6	Ապր.29	Ապր.18	Ապր.3

Հայաստանյայց Ս. Եկեղեցու որոշ տոնների ցուցակ՝

	2006	2007	2008
Ավագ շաբաթ	Ապր.15	Ապր.7	Մրտ.22
Զատիկ	Ապր.16	Ապր.8	Մրտ.23
Ավետում	Ապր.7	Ապր.7	Ապր.7
Ս. Խաչի Երեւում	Մայ.14	Մայ.6	Ապր.20
Համբարձում	Մայ.25	Մայ.17	Մայ.1
Հոգեգալուստ	Հնս.4	Մայ.27	Մայ.11
Ս. Հռիփսիմյանց	Հնս.12	Հնս.4	Մայ.19
Ս. Գայիանյանց	Հնս.13	Հնս.5	Մայ.20
Ս. Գրիգորի ելքը վիրապից	Հնս.17	Հնս.9	Մայ.24
Ս. Էջմիածնի տոն	Հնս.18	Հնս.10	Մայ.25
Վարդավառ	Հլս.23	Հլս.15	Հլս.29
Վերափոխում	Օգ. 13	Օգ. 12	Օգ. 17
Խաչվերաց	Սեպ.17	Սեպ.16	Սեպ.14
Ս. Գեւորգ	Սեպ.30	Սեպ.29	Սեպ.27
Վարագա Ս. Խաչ	Հոկ.1	Սեպ.30	Սեպ.28
Ս. Թարգմանչաց	Հոկ.14	Հոկ.13	Հոկ.11
Խաչի գյուտ	Հոկ.29	Հոկ.28	Հոկ.26
Ս. Թադէոս, Ս. Բարթողիմէոս	Դեկ.2	Դեկ.1	Նոյ.29
Ս. Ստեփանոս	Դեկ.25	Դեկ.25	Դեկ.25

Փրկչական 2006-2015 թթ. տարիների համար:

2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ապր.11	Ապր.3	Ապր.23	Ապր.7	Մրտ.30	Ապր.19	Ապր.4
Ապր.12	Ապր.4	Ապր.24	Ապր.8	Մրտ.31	Ապր.20	Ապր.5
Ապր.7	Ապր.7	Ապր.7	Ապր.7	Ապր.7	Ապր.7	Ապր.7
Մայ.10	Մայ.2	Մայ.22	Մայ.6	Ապր.28	Մայ.18	Մայ.3
Մայ.21	Մայ.13	Հնս.9	Մայ.17	Մայ.9	Մայ.29	Մայ.14
Մայ.31	Մայ.23	Հնս.12	Մայ.27	Մայ.19	Հնս.8	Մայ.24
Հնս.8	Մայ.31	Հնս.20	Հնս.4	Մայ.27	Հնս.16	Հնս.1
Հնս.9	Հնս.1	Հնս.21	Հնս.5	Մայ.28	Հնս.17	Հնս.2
Հնս.13	Հնս.5	Հնս.25	Հնս.9	Հնս.1	Հնս.21	Հնս.6
Հնս.14	Հնս.6	Հնս.26	Հնս.10	Հնս.2	Հնս.22	Հնս.7
Հլս.19	Հլս.11	Հլս.31	Հլս.15	Հլս.7	Հլս.27	Հլս.12
Օգ. 16	Օգ. 15	Օգ. 14	Օգ. 12	Օգ. 18	Օգ. 17	Օգ. 16
Սեպ.13	Սեպ.12	Սեպ.11	Սեպ.16	Սեպ.15	Սեպ.14	Սեպ.13
Սեպ.26	Սեպ.25	Սեպ.24	Սեպ.29	Սեպ.28	Սեպ.27	Սեպ.26
Սեպ.27	Սեպ.26	Սեպ.25	Սեպ.30	Սեպ.29	Սեպ.28	Սեպ.27
Հոկ.10	Հոկ.9	Հոկ.8	Հոկ.13	Հոկ.12	Հոկ.11	Հոկ.10
Հոկ.25	Հոկ.24	Հոկ.23	Հոկ.28	Հոկ.27	Հոկ.26	Հոկ.25
Նոյ.28	Դեկ.4	Դեկ.3	Դեկ.1	Նոյ.30	Նոյ.29	Նոյ.28
Դեկ.26	Դեկ.25	Դեկ.26	Դեկ.25	Դեկ.24	Դեկ.25	Դեկ.26

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏՈՒՄ 6
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ 8
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 10
ՏՅԱՌՆԲՆԴԱՌԱՋ 14
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ 16
ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՈՆ 18
ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ 1036 ՎԿԱՆԵՐԻ ՏՈՆ 20
ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ 22
ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ 26
ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ 28
ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ 30
ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ 32
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄՈՒՏՔԸ ՎԻՐԱՊ 34
ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ 36
ԾԱՂԿԱՁԱՐԴ 38
ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 40
ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ 42
ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 44
ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ 46
ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ 48
ԱՎԱԳ ՇԱԲԱԹ 50
ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ 52
ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՎՄԱՆ ՏՈՆ 54
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ 56
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ 58
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՆՇԽԱՐՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՏՈՆ 60
ՀՌԻՓՍԻՄՅԱՆՔ ԵՎ ԳԱՅԱՆՅԱՆՔ 62
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵԼՔԸ ՎԻՐԱՊԻՑ 64
ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏՈՆ 66
ՎԱՐԴԱՎԱՌ 68
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆ 70
ԽԱՉՎԵՐԱՑ 72
ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ 74
ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆ 76
ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ 78
ԽԱՉԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՏՈՆ 80
ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆ 84
ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ 86
ՏՈՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 88

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ©

«Պատկերազարդ Տոնացույց»

Կազմողներ՝
Մանյա Ղազարյան, Անահիտ Համբարձումյան

Խմբագիրներ՝
Տ. Ղևոնդ քհն. Մայիլյան, Տ. Ադամ քհն. Մակարյան
Ս. Ստամբոլցյան

Նկարիչներ՝
Մերի Ասատրյան,
Միքայել Մկրտչյան, Ռազմիկ Ամիրխանյան

Տոների ժամանակացույցը՝
Գրիգոր Բրուտյանի

Դասիչը՝ ——————





ՄԵՅՐ ԷԹՈՒՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ